

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Ս. ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵՂԱԿԱՊՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Լրամշակված տարբերակ)**



Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝

«Էկոնոմ Էկո» ՍՊԸ

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... | 4 |
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 5 |
| 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... | 6 |
| 3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ..... | 7 |
| 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ..... | 16 |
| 4.1 Նախատեսվող գործունեության համառոտ բնութագիրը..... | 16 |
| 4.2 Ջրամատակարարում և ջրահեռացում..... | 22 |
| 4.3. Էլեկտրամատակարարում..... | 24 |
| 4.4. Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխում..... | 26 |
| 4.5. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ..... | 29 |
| 4.6. Բարեկարգում և կանաչապատում..... | 30 |
| 4.7. Շինարարական և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում..... | 32 |
| 4.7.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր..... | 35 |
| 5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ..... | 40 |
| 5.1. Բնապահպանական պայմանների բնութագիրը..... | 40 |
| 5.2 Օդային ավազան..... | 47 |
| 5.3 Ջրային ռեսուրսներ..... | 48 |
| 5.4 Հողօգտագործում և հողային ռեսուրսներ..... | 50 |
| 5.5 Կենսաբազմազանություն..... | 53 |
| 5.6 Պատմամշակութային հուշարձաններ..... | 57 |
| 5.7 Ժողովրդագրական կազմ և բնակաչություն..... | 58 |
| 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... | 59 |
| 6.1. Օդային ավազանի աղտոտում..... | 60 |
| 6.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն..... | 62 |
| 6.3. Թափոնների առաջացում և կառավարում..... | 63 |
| 6.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն..... | 65 |
| 6.5. Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա..... | 67 |
| 6.6. Աշխատանքի անվտանգություն..... | 67 |
| 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ..... | 69 |

| | |
|--|-----|
| 7.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները | 69 |
| 7.2. Սոնիտորինգ | 71 |
| 8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ | 72 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ | 73 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ | 76 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ | 86 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ | 88 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ | 96 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԿԱԴԱՍՏԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ-ՄԽԵՄԱՆԵՐ | 97 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | 100 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | 101 |

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|--------------------------------------|--|
| Ծրագրի նպատակը | Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի N6 հիմնական դպրոցի կառուցում |
| Նախաձեռնող | «Լուք» ՍՊԸ |
| Նախաձեռնողի կոնտակտային տվյալներ | «Լուք» ՍՊԸ հեռ.՝ +374 77767713 էլ. հասցե՝ archlookschoo@gmail.com |
| ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝ | «Էկոնոմ Էկո» ՍՊԸ, հեռ.՝ +374 94427523 էլ. հասցե՝ economecoeia@gmail.com |
| Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը | Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Գորիս քաղաք, Գետափնյա փող., 1 շենք |
| Կառուցապատվող տարածքի մակերեսը | 2959.00 մ ² |
| Դպրոցի նախագծային հզորությունը | 680 աշակերտ |

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Սյունիքի մարզի Գործիս համայնքի Գործիս բնակավայրի N6 հիմնական դպրոցի կառուցման համար, որի պատվիրատուն հանդիսանում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ): Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքներն իրականացվել են «Լուր» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Գործիս համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով պետական սեփականություն հանդիսացող և «ՀՀ Սյունիքի մարզի Գործիսի Ս. Խանգաղյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրված հողամասի սահմաններում:

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Անշարժ գույքի իրավունքի գրանցման N 11122013-09-0052 վկայականը,
2. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
3. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Նախատեսվող գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Նախատեսվող գործունեության աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3)

12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-ի «ա» ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան, որում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածքում դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լուսմաների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանության ոլորտին առնչվող ավելի քան 30 բնապահպանական օրենքներից:

Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

- **ՀՀ Սահմանադրություն (2015).** ըստ 10-րդ հոդվածի՝ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսները հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ ըստ հոդված 12-ի՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն

ապագա սերունդների առջև: Հոդված 12-ի 2-րդ կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014)** բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի», պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա» և «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:
- **«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** կարգավորում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման, պաշտպանության և վարչարարության հարցերը:
- **«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008)** սահմանում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) կարգավորում է ջրի օգտագործման, պահպանության և սպասարկման հարցերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը (2005) սահմանում է ջրի ազգային քաղաքականությունը ջրային ռեսուրսների կայուն կառավարման, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունների, ջրային ռեսուրսների հաշվառման, գնահատման, առաջարկի և պահանջարկի ձևավորման և ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունների ուղղություններով:
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006) կարգավորում է ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004) կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող

սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

- **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
- **«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (1998)** կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
- **«Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998)** սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:
- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006)** սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության

հարաբերությունները: Համաձայն օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների, ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

- **«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:
- **«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:
- **«Մեյամիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002)**. սահմանում է ՀՀ սեյամիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:

- **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» (28.04.1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:
- **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն (2003)** «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին». սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ Կառավարության որոշում N 108-Ն (2018)** «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին». սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների տեսակները և կանաչապատման տարրերի տեսակային կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- **ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա (25.09.2014)** «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

- **ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում (02.11.2017)** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ կառավարության N781-Ն որոշում (31.07.2014)** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության N1504-Ն որոշում (25.12.2014)** «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»
- **ՀՀ կառավարության N426-Ն որոշում (12.04.2018)** «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում 967-Ն ՀՀ (14.08.2008)** «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին») հաստատում է ՀՀ-ում բնության հուշարձանների ցանկը՝ ըստ հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N 71-Ն (29.01.2010)** «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» հաստատում է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում N72-Ն (29.01.2010)** «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին որոշումը» հաստատում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ կառավարության որոշում 596-Ն (19.03.2015)** ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու

մասին». սահմանում է կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:

- **ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-1243-Ն (30.09.2015)** «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին». սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն (28.12.2020)** ՀՀՇՆ 20. 04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին հաստատում է ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն (24.03.2016)** «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն (28.03.2017)** «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն (19.09.2012)**
«Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային շենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»

- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 103-Ա ՀՀՇՆ31-03.01-2014** «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա (05.04.2018)** «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» (<https://www.minurban.am/storage/Normative/43-A.pdf>):
- **ՀՀ կառավարության որոշում 438 (20.04.2002)** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին» հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը:

Միջազգային համաձայնագրեր.

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)

- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության համառոտ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գործիս քաղաքում՝ Գետափնյա 1 հասցեում: Դպրոցի նոր մասնաշենքերը նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի տարածքում՝ ապամոնտաժելով գոյություն ունեցող մասնաշենքերը՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի:

Նոր կառուցվող դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2959.0 մ², որը տեղակայված է լինելու նախկին դպրոցի տարածքում: Այն նախատեսված է 680 աշակերտների համար և բաղկացած է 6 մասնաշենքերից:

Դպրոցի ընդհանուր հողատարածքի մակերեսը կազմում է 1.0016 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է Հավելված 1-ում):

Գործիսի հիմնական դպրոցը նախատեսվում է կառուցել վերոհիշյալ վկայականի սահմաններում գոյություն ունեցող հողամասի սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ շինությունը էլեկտրական ենթակայանն է՝ եզրագծից ավելի քան 14մ հեռավորության վրա: Մյուս շինությունները (ավտոտնակ, բնակելի տներ, միջին հարկայնության շենք) նույնպես գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից նորմատիվներով սահմանված հեռավորության վրա:

Առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է տարածքի իրադրային սխեմայում (տես՝ Հավելված 9):

Դպրոցի մասնաշենքերը տեղադրված են թեք տեղանքում, առաջին և երկրորդ մասնաշենքերի առաջին հարկի հատակի նիշերը գտնվում են նույն մակարդակում և բարձր են շենքի սալվածքից մոտ 20-100սմ-ով:

Նախագծային լուծումներն իրականացվել են հիմնվելով ՀՀ գործող նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»
- ՀՀ Առողջապահության նախարարի 20 դեկտեմբերի 2002թ. N857 հրաման «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու» մասին
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի 24 մարտի 2016թ. N49-Ն հրաման «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու» մասին
- ՇՈՒՍ 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»
- ՇՈՒՍ 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»
- ՇՈՒՍ 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»
- Սեյսմակայուն շինարարության նորմեր,
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Դպրոցական համալիրի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերի և կանոնների համապատասխան:

Դպրոցական մասնաշենքերի կոնստրուկցիաները նախատեսված են մոնոլիտ երկաթբետոնե շրջանակներով, իսկ ծածկերը միաձույլ երկաթբետոնից՝ հիմնավորված համապատասխան հաշվարկներով:

Սահմանազատող պատերը նախատեսված են երկշարք խարամաբետոնե բլոկներից, որոնց միջև նախատեսված է ջերմամեկուսիչ շերտ պեռլիտի սալերից կամ պոլիստիրոլից: Դպրոցի հիմքերի համար հիմնատակ են ծառայելու բազալտները, որոնց հզորությունը հասնում է 40 մ:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ աշխատանքային նախագծով դպրոցի ճարտարապետական լուծումներում նախատեսված են սեյսմիկ կարաններով տարանջատված 6 մասնաշենքեր:

Մասնաշենք 1. Երկհարկանի ադմինիստրատիվ-տեխնոլոգիական այս մասնաշենքում են տեղակայված լինելու ադմինիստրատիվ բնույթի սենյակները, բուժկետը, գրադարանը, ճաշարանը, որն անմիջապես կապված է ներքին բակի հետ, հանդիսությունների դահլիճը, համապատասխան սպասարկող միջանցքներով և սանհանգույցներով:

Մասնաշենք 2 և 3. Այս երկու ուսումնական մասնաշենքերը եռահարկ են, որտեղ նախատեսված են հիմնական դասասենյակները, միջանցքները, ռեկրեացիաները՝ պատշգամբներով:

Մասնաշենք 4. Եռահարկ շինություն է, որտեղ տեղակայված են քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության դասասենյակներն իրենց լաբորատորիաներով, սպասարկող միջանցքները, պատշգամբներով ռեկրեացիաները և սանհանգույցները:

Մասնաշենք 5. Եռահարկ մասնաշենք է, որտեղ տեղակայված են արհեստանոցը, տնարարության դասասենյակը, ինչպես նաև հանդերձարաններ, սպասարկող միջանցքներ և սանհանգույցներ:

Մասնաշենք 6. Այս մասնաշենքը մեկ հարկանի է, որտեղ տեղակայված է սպորտդահլիճը (չափերը՝ 15x24մ): Սպորտդահլիճը անմիջապես կապված է բաց սպորտային հրապարակի հետ, ունի օժանդակ տարածք, հանդերձարաններ, նախասրահ:

Դպրոցական համալիրն ունի ներքին բակ և հանգստի գոտի: Դեպի ներքին բակ են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները, այն անմիջապես կապված է նաև ճաշարանի մեծ սրահի հետ:

Հատակագծային լուծումները ընդգրկել են դասասենյակների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարությունները ըստ գործող նորմերի: Դասասենյակները գոտևորված են ըստ I-IV, V-VI և VII- IX դասարանի աշակերտների բաշխման:

Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալահատակագծային բարդ ձև, ուստի մասնաշենքերը միմյանցից բաժանվառում են հակասեյսմիկ կարաններով:

Առաջին հարկում են տեղակայված I-IV դասարանի աշակերտների համար գոտևորված դասասենյակների զբաղեցրած մակերեսները, արհեստանոցը, ճաշարանը, որոնք ապահովված են բակի կողմից առանձին մուտքով: Այս հարկում են տեղակայված նաև բուժկետը, սանհանգույցները: Առաջին հարկը ապահովված է ռեկրեացիոն գոտիներով, որոնք ծառայում են որպես զրուցարաններ: Առաջին հարկի ճաշարանից և ռեկրեացիոն գոտուց ապահովված է ազատ մուտք դեպի ներքին բակ, որն իր ծավալով կնպաստի դպրոցի մշակութային կյանքի կազմակերպմանը:

Երկրորդ հարկի հատակագիծը նույնպես ներկայացված է գոտևորման նախագծի տեսքով: Այս հարկի առանձին թևերում նախատեսվում է կազմակերպել V-VI և VII- IX դասարանների աշակերտների ուսումնական գործընթացը:

Երկրորդ հարկում են տեղակայված ուսուցչանոցը, տնօրենի սենյակը և ադմինիստրատիվ բլոկն իր առանձին զուգարաններով, ինչպես նաև մեթոդական սենյակը: Երկրորդ հարկի հատակագծային կարևոր հանգույց է հանդիսանում հանդիսությունների դահլիճը՝ նախատեսված 250 աշակերտի համար, որի բեմն

ապահովված է թատերական դեկորացիաների սենյակով, դերասանական հանդերձարանով և ապակեպատ վիտրաժով մասնակցում է ներքին բակի ձևավորմանը: Ըստ աշխատանքային նախագծի ճարտարապետական լուծումների՝ բեմի ապակեպատ հետնապատը նախատեսվում է կառուցել շարժական, որը հնարավորություն կտա ներկայացումներ կազմակերպել ներքին բակում:

Երրորդ հարկում տեղակայվելու են VII-IX դասարանի աշակերտների համար նախատեսված սենյակներ, մասնավորապես՝ նկարչական և երաժշտական ստուդիաներ, ինֆորմատիկայի սենյակներ, ինժեներական լաբորատորիա: Այս հարկում առկա է նաև ռեկրեացիոն բաց հարթակ, որը նույնպես կարող է ծառայել դասեր, պարապունքներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար: Այդ տարածքն ապահովված է երկու շվաքարանով և առանձին մուտքով դեպի տանիքի ծավալում տեղակայված ապակեպատ բուսաբանական լաբորատորիա:

Դպրոցի գլխավոր հատակագիծը բերված է Հավելված 2-ում:

Դպրոցական համալիրի տանիքը լանջավոր է՝ արտաքին ջրահեռացմամբ և ջերմամեկուսացմամբ, նախատեսված է նաև շենքի ջրհորդանների հակասառեցման համակարգ:

Աղյուսակ 1-ում ներկայացված են նախագծվող դպրոցի կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները:

Աղյուսակ 1. Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները

| ՑՈՒՑԱՆԻՇԸ | ՄԻԱՎՈՐ | ԾԱՎԱԼ |
|---|----------------|--------------|
| Մասնաշենքերի թիվը | հատ | 6 |
| Ընդհանուր հողատարածքի մակերես | հա | 1.0016 |
| Կառուցապատման մակերես | մ ² | 2959.0 |
| Դպրոցի տարողունակությունը | աշակերտ | 680 |
| Մեկ աշակերտին ընկնող ընդհանուր մակերեսը | մ ² | 9.4 |
| Մեկ աշակերտին ընկնող ուսումնական մակերեսը | մ ² | 2.2 |
| Ուսումնական սենյակների քանակ | հատ | 28 |
| Ուսումնական սենյակների մակերես | մ ² | 1486.0 |
| Հիմնական սենյակների մակերես | | |
| Հանդիսությունների դահլիճ | մ ² | 226.0 |
| Մարզադահլիճ | մ ² | 360.0 |

| | | |
|------------------------------|----------------|--------------------------------------|
| Ուսուցչանոց | մ ² | 74.2 |
| Բուժկետ | մ ² | 48.2 |
| Գրադարան | մ ² | 62.3 |
| Ինժեներական ցանցեր | | |
| Էլ. սնուցում | կվտ-ժամ | 190.0 |
| Ջրամատակարարում | լ/վրկ | 4.7 |
| Կոյուղի | լ/վրկ | 6.3 |
| Ջեռուցում | | |
| Կաթսաների քանակ | հատ | 2 |
| Պահանջվող հզորություն | կվտ-ժամ | 2 x 465 |
| Կաթսայատան մակերես | մ ² | 32.7 |
| Բարեկարգում | | |
| Բարեկարգվող ընդհանուր տարածք | մ ² | 6738.3 x 480 (դպրոցի տարածքից դուրս) |
| Ասֆալտապատում | մ ² | 1456 |
| Սպորտային և խաղահրապարակներ | մ ² | 299 |
| Ներքին բակ | մ ² | 256 |

Դպրոցը ներկայումս գործող է և հետևաբար ապահովված է էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու համակարգերով: Ինժեներական կոմունիկացիաների նախագծերը և սխեմաները նոր կառուցվող դպրոցի համար սկզբունքորեն մնացել են անփոփոխ, սակայն աշխատանքային նախագծում ընդգրկվել են նոր տեխնիկական լուծումներով պայմանավորված որոշակի փոփոխություններ:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք կարևոր հարցերի: Դպրոցական համալիրը ապահովված կլինի երկու վերելակներով, հատուկ զուգարաններով, թեքահարթակներով, որոնք նախատեսված են հենաշարժային խախտում/հաշմանդամություն ունեցող աշակերտներին սպասարկելու համար: Հետևաբար, դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժային խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար:

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն

ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Դպրոցի մասնաշենքերը նախատեսվում է ջերմամեկուսացնել համաձայն գործող նորմերի և տնտեսական նպատակահարմարության սահմաններում: Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էներգախնայողության նպատակով երրորդ մասնաշենքի դեպի հարավ ուղղված տանիքի շեպի վրա կտեղադրվեն ֆոտովոլտային փոխարկիչներ և տաք ջրամատակարարման արևային վահանակներ՝ 8մ² տաքացման մակերեսով: Արևային վահանակների տեղադրումն իրականացվելու է համապատասխան լիցենզիա կամ սերտիֆիկատ ունեցող կազմակերպության կողմից, ովքեր հետագայում իրականացնելու են սպասարկումը և խոտանման աշխատանքները:

Նախատեսված է տեսահսկման համակարգ՝ 54 տեսախցիկներով, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև հեռախոսակապի համակարգ, համակարգչային ցանց, զանգային և ժամավորման ցանցեր: Դպրոցական համալիրի արտաքին ճակատները կունենան նաև արտաքին լուսավորություն:

Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը և դպրոցի հարկերի հատակագծերը ներկայացված են հավելված 2-ում:

4.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Դպրոցի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից 16.10.2024թ. տրված տեխպայմանի

համաձայն: Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացման ցանց և հակահրդեհային սնուցող ցանց:

Ջրամատակարարման արտաքին ցանցը նախատեսված է մոնտաժել պողպատյա եռակցված խողովակներով, իսկ ներքին ցանցը՝ պոլիպրոպիլենե և պոլիէթիլենային խողովակներով: Սառը և տաք ջրամատակարարման համակարգերը կարգավորվելու են փականներով: Ջրաչափությունը նախատեսվում է իրականացնել արտաքին ջրագծի մուտքագծի վրա տեղադրվող ջրաչափական հորում:

Արտաքին կոյուղու կառուցման և վերակառուցման աշխատանքները կատարվելու են ըստ ՄՆԻՊ 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» պահանջների: Նախագծով նախատեսված է կենցաղային կոյուղու թողարկների կառուցում: Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներով: Կոյուղաջրերը նախատեսվում է լցնել արտաքին կոյուղու ցանցի դիտահորեր, որից հետո դրանք կմիանան կոյուղու կենտրոնական համակարգին:

Արտաքին հրդեհամարման համար նախատեսված են հրդեհային հիդրանտներ: Համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի՝ ներքին հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը կազմում է 2x2.5լ/վրկ:

Դպրոցի տաք ջրամատակարարման համար օգտագործվելու է արևային էներգիան: Այդ նպատակով նախատեսված է տեղադրել 1000լ տարողունակությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշումային ջրատաքացուցիչ բաք, որի ջերմամատակարարումը իրականացվելու է կաթսայից և տանիքում տեղադրվող արևային ջրատաքացման համակարգից: Արևային վահանակների դիրքը նախատեսված է այնպես, որպեսզի բացառվի կողային տանիքի հնարավոր ստվերացումը: Կիրառվում է 13,9 կՎտ (փոփոխական 220 Վ) հզորությամբ ինվենտոր՝ 97% արդյունավետությամբ, որը կարող է աշխատել օդի -25 մինչև +60oC ջերմաստիճանների պայմաններում:

4.3. Էլեկտրամատակարարում

Դպրոցի էլեկտրոսնուցման արտաքին ցանցերի միացումները կատարվելու են անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ: Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, էլեկտրամատակարարման համար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ բոլոր կոմունիկացիաներն արդեն առկա են ու պայմանները չեն փոխվում:

Արտաքին էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է համաձայն նախագծման առաջադրանքի և գլխավոր հատակագծի: Նախագիծը մշակված է համաձայն ПУЭ-2009 «Գյուղական էլեկտրական ցանցերի և էլեկտրակայանների նախագծման տեխնոլոգիական նորմաների» և ուրիշ գործող նորմատիվ ու ղեկավարող ձեռնարկների:

Ըստ էլեկտրամատակարարման կատարման հուսալիության՝ տվյալ օբյեկտի հոսանքընդունիչները պատկանում են III կատեգորիայի սպառիչներին:

Դպրոցի շենքի էլեկտրամատակարարման նախագիծը և կառուցումը իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հրապարակված որոշման հիման վրա ցանցին միացող սպառողների ստանդարտ միացման վճարի:

Էլեկտրական սնուցման մալուխը անցկացվում է խրամուղու մեջ, գետնի մակերեսից 0.8 մ խորությամբ, շենքերի և կառույցների հիմքերից 0.6 մ-ից ոչ պակաս հեռավորությամբ:

Արտաքին լուսավորությունն իրականացվում է ջերմային ռելերով և մագնիսական թողարկիչով վահանակի և մետաղական հենասյունների վրա տեղադրված լուսադիոդային լամպերի միջոցով: Վահանակի սնուցումը կատարվում է խրամուղիների մեջ փռված մալուխային գծերով: Մալուխների փռումը գրունտի մեջ իրականացվում է համաձայն ПУЭ-2009, Գլուխ 2.3.83 և 2.3.99-ի:

Զուգահեռ տեղադրման ժամանակ հեռավորությունը (հորիզոնական) մալուխային գծերից մինչև խողովակաշարերը (ջրամատակարարման, կոյուղու, գազի) պետք է լինի 1մ-ից ոչ պակաս:

Մալուխային, ջրամատակարարման, կոյուղու գծերի հատման ժամանակ, մալուխային գիծը անցկացվում է պահպանելով 0.25մ հեռավորությունը մալուխային և այդ գծերի միջև:

Մալուխների փռումը կանաչ գոտում իրականացվելու է համաձայն ՍՄԾ-2009, Գլուխ 2.3.87-ի՝ պահպանելով մինչև 1մ հեռավորություն ծառերի բները և 0.7 մ թփուտները:

Սպասարկող անձնակազմի անվտանգության համար ցանցի հողակցումը կատարվելու է համապատասխան ՍՄԾ-2009-ի: 380/220Վ լարման արտաքին լուսավորության նախագիծը մշակված է համաձայն նախագծման առաջադրանքի և գլխավոր հատակագծի: Նախագիծը մշակված է համաձայն ՍՄԾ-2009 «Գյուղական էլեկտրական ցանցերի և էլեկտրակայանների նախագծման տեխնոլոգիական նորմաների» և ուրիշ գործող նորմատիվ ու ղեկավարող ձեռնարկների:

Ըստ էլեկտրամատակարարման հուսալիության՝ տվյալ օբյեկտի հոսանքընդունիչները պատկանում են III կատեգորիայի սպառիչներին: Սպառիչները պատկանում են պաշտպանվածության 1P02 դասին:

Նախագծում նախատեսված է շենքի ճակատների արտաքին լուսավորության ցանց: Շենքի ճակատներին տեղադրվում է 37 հատ լուսադիոդային լամպով լուսարձակ: Արտաքին լուսավորության ցանցի սնուցումը իրականացվում է վահանակների սենյակում տեղակայված արտաքին լուսավորության վահանակից: Արտաքին լուսավորության ցանցը իրականացվում է BBF-660 մակնիշի մալուխով, պատի վրա պոլիէթիլենային խողովակով:

Ցանցի կառավարումը իրականացվում է ֆոտոռելեի և հերմետիկ անջատիչների միջոցով տեղադրված մասնաշենքի գլխավոր մուտքի մոտ արտաքին պատին H=1.8մ բարձրությամբ: Ֆոտոռելեն տեղադրվում է արևելյան կողմում: Սպասարկող

անձնակազմի անվտանգության համար ցանցի հողակցումը կատարել համապատասխան ПУЭ-2009-ի:

4.4. Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխում

Գազամատակարարման միացումները կատարվելու են անմիջապես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ: Հաշվի առնելով, որ նոր դպրոցը կառուցվում է նախկին դպրոցի տարածքում, գազամատակարարման համար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ բոլոր կոմունիկացիաներն արդեն առկա են ու պայմանները չեն փոխվում:

Ջեռուցում: Դպրոցի շենքի ջեռուցման և օդափոխության նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով.

- Պատվիրատուի առաջադրանքը
- Ճարտարապետաշինարարական գծագրերը
- Գործող շինարարական նորմերը և կանոնները
- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում օդափոխում և օդի լավորակում»
- ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»
- ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»
- ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր»

Ջեռուցման և օդափոխման հաշվարկային ջերմաստիճանը տարվա ցուրտ ժամանակաշրջանի համար -19°C : Սենյակների ներքին ջերմաստիճանները ընդունված է ըստ վերը նշված նորմերի:

Ջեռուցման ցանցի նախագիծը կատարված է համաձայն 2.04.07.86 շինարարական նորմերի և կանոնների: Ջերմության աղբյուր հանդիսանում է տարածքում կառուցվող կաթսայատունը: Ջերմատարը հանդիսանում է ջուրը՝ $80-60^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային էջքով: Ջերմային ցանցի խողովակները անցնում են խրամուղով: Ջերմատար խողովակները մաքրվում են ժանգից, պատվում հակակոռոզիոն լաքով, ջերմամեկուսացվում պլյումինե փայլաթերթով պատած հանքաբամբակով:

Շարժական հենարանները տեղադրվում են $d=89 \times 3.5-3.5$ մ, $d=76 \times 3.5-3.0$ մ, $d=57 \times 3.5-3.0$ մ քայլով: Ջերմային ցանցի խրամուղում է տեղադրվում արևային համակարգով ջրի տաքացման խողովակները և կաթսայատան ջրամատակարարման խողովակը:

Շենքում նախատեսված է արհեստական շրջանառությամբ ջերմատարի ստորին մատակարարումով փակուղային երկխողովականի ջրային ջեռուցման համակարգ: Մայրուղային մատակարարող և հետադարձ խողովակները տեղադրվում են հատակների վրա և փակվում են լամինացված փայտատաշեղային սալերով կառուցված պատյանով: Դռների մոտով անցնող խողովակները ջերմամեկուսացվում են և անց են կացվում պաշտպանիչ պատյանի միջով և տեղադրվում են հատակի տակ: Շենքի ջերմամատակարարումը իրականացվում է տարածքում կառուցվող կաթսայատնից 2 մուտքագծով: Հակասեյսմիկ կարանների հատվածներում խողովակների վրա տեղադրվում են կոմպեսատորներ, իսկ պատերի անցման տեղերում խողովակները անցնում են մետաղական խողովակից պարկուճների միջով: Ջեռուցման համակարգում տեղադրվում են պողպատե պանելային ջեռուցիչներ, որոնց ջերմատվությունը ընտրված է $75-65^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային էջքի և 20°C սենյակային ջերմաստիճանի համար նախատեսված տվյալներով: Համակարգում տեղադրվում են պոլիպրոպիլենե խողովակներ: Հարմարավետության և էներգախնայողության նպատակով բոլոր ջեռուցման սարքերի վրա տեղադրվում են օդի հեռացման փականներ: Միջհարկային ծածկերի, պատերի միջով անցնող խողովակների անցման տեղերում տեղադրվում են պողպատե խողովակից պատյաններ: Համակարգի բոլոր կանգնակերի վրա տեղադրվում են ձեռքով կառավարվող հաշվեկշռային կափույներ:

Ջեռուցման ապահովման նպատակով կկառուցվի $32,7$ մ² մակերեսով կաթսայատուն, որի կրող կոնստրուկցիան ե/բ կմախքն է, հիմքերը՝ բետոնյա ժապավենային, պատերը քարե, ինքնակրող, ծածկը ե/բ, օդափոխության համար նախատեսված անցքերով: Կաթսայատան սարքավորումները ընտրվել են հաշվի առնելով կառուցվող շինության ջերմային պահանջները: Կաթսայատանը

նախատեսվում է տեղադրել 2 կաթսա՝ յուրաքանչյուրը 400 կվտ ջերմային հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով:

Որպես հիմնական վառելիք կկիրառվի բնական գազը, որը կաթսաների այրիչներին մատակարարվելու է արտաքին ցանցից: Գազի ծախսը կազմում է $96\text{մ}^3/\text{ժամ}$, որը կմատակարարվի գոյություն ունեցող համակարգից: Ջերմատարը հանդիսանում է ջուրը՝ $60-80\text{ }^\circ\text{C}$ ջերմաստիճանային էջքով:

Ջերմային ցանցի խրամուղում նախատեսվում է տեղադրել կաթսայատան ջրամատակարարման խողովակները և արևային համակարգով ջրի տաքացման խողովակները: Կաթսայատան գազասպառման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով կտեղադրվի այրվող գազերի ազդանշանային սարք:

Ազդանշանման համար սահմանված արժեքները գերազանցելու դեպքում դեղեկտորը տալիս է լուսաձայնային ազդանշան, որի դեպքում էլ. մագնիսական կափույրը դադարեցնում է գազի մատակարարումը դեպի գազասպառման սարք:

Կաթսաներն ունեն ցածր աերոդինամիկ դիմադրություն, ուստի վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի քարշը բնական է: Վառելիքի այրման համար օդը այրիչների համար վերցնում են կաթսայատան սրահից, որն այնտեղ մուտք է գործում դռան և պատուհանի վրա նախատեսված ճաղաշարերից:

Բնական գազով կաթսայատան շահագործման ընթացքում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում ($C_{\text{NO}_2}=0.04\text{ մգ/մ}^3$, $C_{\text{CO}}=0.007\text{ մգ/մ}^3$):

Օդափոխություն: Օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ ՀՀ գործող նորմերի: Իրականացվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Դասասենյակներում օդի ներածումը բնական է, իրականացվում է լուսամուտներից՝ դասամիջոցներին: Արտածումը ևս բնական է, իրականացվում է սենյակի միապատիկ ծավալի չափով՝ ուղղաձիգ օդատարների միջոցով:

Շենքի դահլիճում, ճաշարանում, արհեստանոցում, տնարարության աշխատասենյակում և մարզադահլիճում նախատեսված են օդափոխման ներածման և արտածման համակարգեր: Օդի ներածումը իրականացվում է օդափոխության ագրեգատներով, որոնք համալրված են ներածման օդամուղով, ջրային օդատաքացուցիչով, ֆիլտրերով, ավտոմատ կառավարման համակարգով, որը ծրագրավորվում է գործարանում: Օդի արտածումը կատարվում է կանալային օդամուղներով: Օդափոխության համակարգում տեղադրվող բոլոր օդատարները ջերմամեկուսացվում են: Դասասենյակներում օդի ներածումը և արտածումը իրականացվում է ջերմության վերօգտագործումով օդի ներածման և արտածման ագրեգատներով: Դասասենյակներում ներածվող օդաքանակը հաշված է յուրաքանչյուր աշակերտին 16մ³/ժամ: Օդափոխության համակարգում տեղադրող սարքավորումները ընտրված են Systemair օդափոխության սարքավորումների արտադրության տվյալներով: Կարելի է տեղադրել նույն պարամետրերի և որակի այլ արտադրության սարքավորումներ:

4.5. Էներգախնայողության ու էներգաարդյունավետության միջոցառումներ

Նոր դպրոցի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները իրականացվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշման դրույթների, շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսված են միջոցառումներ շենքի երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ, մասնավորապես.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,

- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пенopleкс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում և այլն:

4.6. Բարեկարգում և կանաչապատում

Նախագծով նախատեսվում է կառուցել նոր դպրոցի մասնաշենքերը առկա թիվ 6 հիմնական դպրոցի տարածքում՝ ապամոնտաժելով առկա գործող մասնաշենքերը համաձայն նախագծման առաջադրանքի:

Նախագծում նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

- Առկա քարե ցանկապատի սվաղում ցեմենտավազային շաղախով մետաղական ցանցի վրա Bp4 ք 50x50 (մմ) և ներկում ճակատային ներկով
- III կարգի գրունտի կտրում և տեղափոխում թափոնատեղ
- Քայքայված ասֆալտբետոնե ծածկույթի և մայթի եզրաքարերով ապամոնտաժում
- Ե/բետոնե բեմի ապամոնտաժում և տեղափոխում թափոնատեղ – $6.00 \times 9.60 \times 0.70 = 40.30 \text{մ}^3$
- Նոր սավաճքի իրականացում բազալտե եզրաքարերով
- Նոր ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում բազալտե եզրաքարերով
- Առկա կանաչ գոտիների վերականգնում
- Ծաղկանոցի և սիզամարգերի հիմնում
- Նոր ցանկապատի, դարպասի և դռնակի տեղադրում
- Ձևավոր բետոնե սալիկներով ծածկույթի իրականացում
- Նստարանների տեղադրում տարածքում՝ 2 հատ և ներքին բակում՝ 10 հատ:

Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ.) որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները: Դպրոցի տարածքում նախատեսվում է ծաղկանոցի և սիզամարգերի

հիմնում: Դպրոցի կանաչապատման տարածքը կազմում է 2788մ²: Նախատեսվող գործունեության կանաչապատման նախագիծը ներկայացված է հավելված 8-ում:

Դպրոցի տարածքում տնկվող ծառատեսակները և նրանց քանակային տվյալները ներկայացվում են ստորև՝

- Թխկի դաշտային-20 հատ
- KIPARISOVIK PINUS – 12 հատ
- Սյունաձև թույա – 18 հատ
- Բարդի արծաթափայլ – 6 հատ
- Բարբարիս – 23 հատ
- Ասպիրակ – 16 հատ
- Ֆորգիցիա – 16 հատ
- Խենոմելես- 14 հատ
- ALBITZIA - 14 հատ
- Եղևնի փշոտ - 5 հատ
- Գիհի կազակական – 17 հատ
- Հուդայածառ – 11 հատ
- Prunus kanzan – 24 հատ
- Թզուկ վարդեր - 109.1մ²
- Սամշիտ – 208 գմ
- Սիզամարգ – 2788մ²:

Ներկայիս դպրոցի տարածքում առկա է 2 ծառ, որոնք չեն հատվելու նախատեսվող գործունեության ընթացքում:

Բարեկարգման և կանաչապատման աշխատանքները կմեկնարկեն գոյություն ունեցող դպրոցի հին շենքի ապամոնտաժումից հետո:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող

օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպշտողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

4.7. Շինարարական և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

Քանդման աշխատանքներ: ՀՀ Կառավարության 2019թ. փետրվարի 6 թիվ 87-Ա որոշման համաձայն՝ (<https://www.e-gov.am/gov-decrees/item/31407/>) Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված ծավալներին համապատասխան:

Շենք-շինությունների քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման համար մրցութային գործընթացում ընտրված շինարարական կազմակերպությանը: Քանդման ներառյալ շենքերի հիմքերի և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքներն իրականացվելու են ընտրված շինարարական կազմակերպության հաշվին, որը ևս ամրագրված է կառավարության սույն որոշման մեջ:

Քանդման աշխատանքների նախագծով նախատեսվում է նախապատրաստել ՀՀ Սյունիքի մարզի «Գործիսի Ս.Խանգաղյանի անվան N6 հիմնական դպրոց»-ի հասցեում աշխատանքների իրականացման նպատակով շինարարական հրապարակի ազատումը նոր դպրոցի շինությունը կառուցելու նպատակով:

Քանդման նախագիծը իրականացվում է «ԱրՄատ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի պատվերով: Նախատեսվում է ապամոնտաժել դպրոցի բոլոր մասնաշենքերը՝ 4793.2մ² մակերեսով: Քանդման համար հիմք են հանդիսացել՝

1. ՀՀ Կառավարության կողմից՝ 30 նոյեմբերի 2023 թվականին ընդունված N2093 որոշումը. մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող և վերակառուցվող 300 դպրոցների ծրագրին համապատասխան,

2. «Վելես Գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ 02.12.2024 թվականին տրված N03-24-71 տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Ապամոնտաժման աշխատանքների ժամանակ արգելվում է.

- Ապամոնտաժվող պատերի ենթահատում ստորին հատվածամասից;
- Աշխատանքների կատարումը մի քանի հարկով ուղղահայաց բարձրությամբ;
- Աշխատանքների կատարման ժամանակ մարդկանց առկայությունը շինության ներսում և բեռի անկման վտանգավոր գոտում:
- Չի թույլատրվում շինարարական աղբի կուտակում հարկում:
- Չի թույլատրվում թունավոր հեղուկների և նավթամթերքի լցումը շինհրապարակում չքայքայվող շինաղբի /ապակի, պոլիէթիլեն, մետաղ/ առկայության գոտում:

Աշխատանքների կատարման հաջորդականությունը հետևյալն է.

- արտաքին պարուրող պատերի քանդում,
- ծածկի սայի քանդում,
- սյուների և հեծանների քանդում,
- հիմքերի քանդում:

Շենքի տանիքը լանջավոր է՝ փայտե ծպեղնային և կավարամածային կոնստրուկցիաներով և ծածկված է մետաղական ալիքավոր թերթերով:

Քանդում թույլատրվում է իրականացնել քամու ոչ ավելի 6մ/վրկ արագության դեպքում, բավարար տեսանելիության դեպքում /այսինքն բոլոր աշխատանքները

պետք է կատարել օրվա լուսավոր ժամերին/: Շինությունների ապամոնտաժման ժամանակահատվածում նախատեսվում է ջրել շինարարական աղբը ջրով: Տարանցիկ ստորգետնյա ինժեներական գծերը պաշտպանելու համար նախատեսվում է իրականացնել ազդանշանային ժապավեններ, նախազուշական ցուցանակների տեղադրմամբ՝ նշելով հողային աշխատանքների արգելումը:

Հողային աշխատանքներ: Դպրոցի կառուցման հողային աշխատանքների դեպքում ընդհանուր հանույթը կազմում է 24520մ³, որի մի մասը՝ 5450մ³ նախատեսվում է օգտագործել ետլիցքի նպատակով: Մնացած 19070մ³ ծավալը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից նախատեսված վայր:

Բնառեսուրսների օգտագործում: Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավեցման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է .

- Հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավեցման համար,
- Անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 3000 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար:

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1- ջրվող տարածքի մակերես, 3000մ²

K1- 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T- հողային աշխատանքների օրերի քանակ, 55 օր

Ըստ այդմ, ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 3000 \times 2 \times 0.0015 \times 55 = 495 \text{մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ .

$W_{\text{խ.տ.}} = (n \times N_x + n1 \times N1) T1$, որտեղ

n- ԻՏ աշխատողների թվաքանակ, 2 մարդ

N- ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1- շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 1452 օր

n1- բանվորների (այդ թվում՝ օժանդակ տնտեսություններ) թվաքանակ, 97 մարդ

N1- բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 97 \times 0.025) \times 1452 = 3568 \text{ մ}^3$

Ընդհանուր ջրապահանջը կկազմի՝ $495 \text{ մ}^3 + 3568 \text{ մ}^3 = 4063 \text{ մ}^3$

4.7.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է, իսկ երկրորդ փուլում իրականացվում են հիմնական աշխատանքները:

Հիմնական աշխատանքներն իրենց հերթին բաղկացած են ներկայիս կառույցի ապամոնտաժման աշխատանքներից և նախատեսվող նոր դպրոցի 6 մասնաշենքերի (ներառյալ օժանդակ կառույցների) շինարարական աշխատանքներից:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները .

- Շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությամբ և արգելափակիչ նշաններով:
- Գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում:
- Ժամանակավոր շինությունների տեղադրում գոյություն ունեցող ազատ տարածքում:

Հիմնական փուլում իրականացվելու են հետևյալ հիմնական աշխատանքները.

- Քանդման/ապամոնտաժման աշխատանքների իրականացում այնպիսի հերթականությամբ, ինչը թույլ կտա հիմնական ապամոնտաժումն իրականացնել

շինության երկու կողմից՝ պահպանելով անվտանգության կանոնները: Ապամոնտաժման աշխատանքների դեպքում կկիրառվեն պաշտպանիչ ցանցեր, որոնք մասնաշենքի ապամոնտաժման ընթացքում կապահովեն բանվորների և շին. անձնակազմի անվտանգությունը թափվող և ընկնող առարկաներից: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը:

- **Շինարարական/մոնտաժման աշխատանքների իրականացում**, որի ժամանակ կիրականացվեն նոր դպրոցի 6 մասնաշենքերի շինարարական աշխատանքները:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը առաջարկվում է հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն, որ շինհրապարակը գտնվում է համայնքի բնակելի հատվածում: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինհրապարակին կից համեմատաբար ազատ տարածքները: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կձևավորվի շինարարության ընթացքում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյնիւրների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, գործիքների պահեստ, ինչպես նաև բիոզուգարան և կիսափակ պահեստ:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, սրված համայնքապետարանի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի ու գազատարի հետ

հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլտվությամբ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Շաղախը և բետոնը կառաքվեն Գործիս քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն ունի չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Գործիս քաղաքի շինարարական արդյունաբերության թերբեռնված հզորությունները
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կրերվեն անմիջապես շինհրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական ապահովումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական աղբը կտեղափոխվի համայնքի կողմից նախանշվող վայր, որի վերաբերյալ որոշումը համայնքի կողմից կտրամադրվի շինթույլտվության տարամադրման փուլում:

4.7.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ

Շինարարական մեքենա-մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվական կարգով և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությունից կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 2-ում:

*Աղյուսակ 2. Տեխնիկական միջոցների անվանացանկ**

| N | Մեքենա-մեխանիզմների անվանում | Մակնիշ/հզորություն | Քանակ, հատ |
|-----|--------------------------------------|--|------------|
| 1. | Ավտոինքնաթափ | 10 տ բեռնունակություն | 3 |
| 2. | Կցորդիչ-սալատեղափոխիչներ | 24 տ բեռնունակություն | 2 |
| 3. | Ավտոամբարձիչ | 36 տ բեռնունակություն | 1 |
| 4. | Ավտոբետոնախառնիչ | 2 մ ³ տարողություն | 2 |
| 5. | Ավտոբետոնապոմպ | 10 մ ³ արտադրողակ . | 1 |
| 6. | Կոմպրեսոր | 10 մ ³ արտադրողակ . | 1 |
| 7. | Հետահար մուրճ | ՄՕ-10 | 3 |
| 8. | Բուլդոզեր | 59 Կվտ | 1 |
| 9. | Էքսկավատոր | 0.65 մ ³ շերտի տարողությամբ | 1 |
| 10. | Ինքնագնաց գլղոն | առնվազն 6տ | 1 |
| 11. | Ձեռքի տոփիչ | 40 կգ | 2 |
| 12. | Ասֆալտատեղադրիչ մեխանիզմների լրակազմ | - | 1 |

| | | | |
|-----|---------------------------------|----|---|
| 13. | Զոդման ապարատ պողպատի համար | | 3 |
| 14. | Զոդման ապարատ պոլիէթիլենի համար | | 1 |
| 15. | Խորքային վիբրատոր | Իվ | 2 |
| 16. | Մակերևութային վիբրատոր | | 2 |

** մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով*

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 5 տարի և 5 ամիս, որից 10.5 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող շինության ապամոնտաժման աշխատանքների համար:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համապատասխան նորմատիվային տվյալների EՀԽԲ-ի համաձայն:

Բանվորների առավելագույն քանակը, ներառյալ այլ տնտեսությունների, (օժանդակ տնտեսություններ) կկազմի $75 \times 1.3 = 97$ մարդ:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 99 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 2 մարդ
- Բանվորներ՝ 97 մարդ, (ներառյալ օժանդակ տնտեսությունները) :

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Բնապահպանական պայմանների բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում:

Կլիման և օդերևութաբանական պայմանները: Տարածաշրջանը գտնվում է «ցուրտ» կլիմայական գոտում՝ զով ամառով և խիստ ցուրտ ձմեռով: Այստեղ ձմեռը երկարատև է: Կայուն ձյան շերտը պահպանվում է 3-4 ամիս: Ձմռան եղանակային ռեժիմը բնութագրվում է որպես կայուն և շատ կայուն: Ձմեռային եղանակները առանձնանում են արևոտ և անհողմ օրերի զգալի քանակով: Տարածաշրջանում գերակշռում են «չափավոր սառնամանիքային» և «զգալի սառնամանիքային» եղանակները: Գարունը զով է, երկարատև (2-3 ամիս) և չափավոր սառը: Գարունը սկսվում է ապրիլի երկրորդ կամ երրորդ տասնօրյակից: Մայիսը ամենաանձրևային ամիսն է: Գարնանը եղանակային ռեժիմը կայուն չէ, ապրիլ ամսին 12 օր դիտվում են «կոնտրաստ» փոփոխականությամբ եղանակային պայմաններ: Գարնանային ուշ ցրտահարությունները վերջանում են մայիսի երկրորդ կամ երրորդ տասնօրյակում: Ամառը չափավոր տաք է, տևում է 2-3 ամիս, գերակշռում են պարզ եղանակները: Տարածաշրջանում որոշակի տարիներին լինում է չորային եղանակ: Գերակշռում է «արևոտ, չափավոր խոնավ» եղանակային տիպը՝ 16 օր ամսվա ընթացքում: Իսպառ բացակայում է «շատ շոգ և շատ չոր» եղանակային տիպը: Աշունը զով է: Առաջին աշնանային ցրտահարությունները լինում են հոկտեմբերի առաջին և երկրորդ տասնօրյակներում, երբեմն սեպտեմբերի առաջին տասնօրյակում: Անսառնամանիք օրերի թիվը կազմում է 120-180 օր:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել են ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերում ներկայացված Գորիս տարածաշրջանի կլիմայական պայմանների տվյալները:

Ջերմաստիճանը: Տարեկան միջին ջերմաստիճանը 9.2°C: Ամենատաք ամսվանը 19.2°C (հուլիս), ամենասառը ամսվանը՝ -0.5°C (հունվար): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -20.4°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 35.4°C: Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

| Բնակավայրի անվանումը | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|----------------------|-------------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|-------------------|-------------------------|---------------------------|
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| Գորիս | -0.5 | 0.1 | 3.0 | 8.4 | 12.9 | 16.5 | 19.2 | 18.8 | 14.9 | 10.1 | 5.4 | 1.5 | 9.2 | -20.4 | 35.4 |

Խոնավությունը: Տարածաշրջանում՝ ամառային ժամանակահատվածում, օդի խոնավություն ցուցանիշները տատանվում են 69-72% միջակայքում, միջին տարեկան խոնավությունը՝ 70% է: Օդի հարաբերական խոնավության տվյալները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Օդի հարաբերական խոնավության տվյալները

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|----------------------|----------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|------------------|---|--------------------------|---|--------------------------|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան, % | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական ժամը 15-ին |
| Գորիս | 65 | 67 | 71 | 72 | 74 | 72 | 69 | 70 | 77 | 77 | 71 | 65 | 70 | 65 | 57 | 69 | 55 |

Մթնոլորտային տեղումներ: Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 737մմ: Գորիսի տարածաշրջանում ամենաանձրևոտ ամիսը մայիսն է՝ 111 մմ: Նվազագույն տեղումների քանակը դիտվում է դեկտեմբեր ամսին՝ 32մմ: Տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները, %

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ | |
|----------------------|---|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---|---|---------|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | Տարեկան |
| Գորիս | 33 | 42 | 73 | 88 | 111 | 92 | 47 | 42 | 63 | 67 | 47 | 32 | 737 | 277 | 510 |
| | 29 | 31 | 45 | 48 | 57 | 82 | 77 | 63 | 54 | 61 | 58 | 35 | 82 | | |

Քամիներ: Դիտարկվող տարածաշրջանում քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հունվար ամսին հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ 3.2 մ/վ արագությամբ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է հունվար ամսին և կազմում է 2 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.5 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (15 մ/վ) 25-ն է:

Քամու ուղղությունների ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հունվար ամսին հյուսիս-արևմտյան ուղղությամբ և կազմում է 45%: Տարածաշրջանում քամիների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Քամի

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % | | | | | ըստ ուղղությունների | | | Անդրորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|----------------------|-----------|-------------------------|------------------|----------|----------------|-----------|---------------------|----------|------------------|-----------------------------|---------------------------------|---|--|--|---|
| | | Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | | | | | | |
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ-արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Գորիս | Հունվար | 3 | 2 | 2 | 6 | 9 | 13 | 20 | 45 | 30 | 2.0 | ՀսԱրմ | 1.6 | ՀսԱրմ | 3.2 |
| | | 2.7 | 2.4 | 2.2 | 1.6 | 1.6 | 2.1 | 2.6 | 3.2 | | | | | | |
| | Ապրիլ | 2 | 2 | 4 | 13 | 12 | 14 | 18 | 35 | 33 | 1.5 | | | | |
| | | 2.3 | 2.2 | 1.8 | 1.6 | 1.7 | 2.0 | 2.3 | 2.5 | | | | | | |
| | Հուլիս | 1 | 1 | 4 | 17 | 15 | 14 | 17 | 31 | 26 | 1.2 | | | | |
| | | 1.4 | 1.4 | 1.6 | 1.7 | 1.6 | 1.6 | 1.6 | 1.6 | | | | | | |
| | Հոկտեմբեր | 2 | 1 | 2 | 12 | 14 | 14 | 17 | 38 | 35 | 1.3 | | | | |
| | | 1.9 | 1.9 | 1.8 | 1.7 | 1.6 | 1.9 | 1.9 | 2.2 | | | | | | |

Երկրաբանությունը: Դիտարկվող տարածաշրջանը գտնվում է Զանգեզուր բնաշխարհի տարածքում, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Տարածաշրջանի ամենաբարձր լեռնագագաթը

Կապուտջուղն է (3906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380 մ): Երկրաբանական տեսանկյունից տարածաշրջանը գոտևորող լեռնային շրջանն ունի տեկտոնական ծագում, լեռնաշղթաներն իրենց գագաթներով և լանջերով հիմնականում ժայռոտ են:

Բարգուշատի լեռնաշղթան Զանգեզուր լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումն է: Այն ունի մոտ 70կմ երկարություն և 15-26 կմ լայնություն: Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը Արամազոն է՝ 3392մ: Լանջերը կտրտված են Որոտանի և Գեղիի վտակների խոր (մինչև 800 մ) կիրճերով: Ծալքաբեկորավոր լեռնաշղթա է: Գիրաթաղ-Սվարանց գետահովիտներով բաժանվում է արևմտյան և արևելյան մասերի: Արևմտյան մասը բարձրադիր հորստաձև բեկոր է՝ կազմված պալեոզոյի փոխակերպային նստվածքից և եոցենի հրաբխածին նստվածքից, ապարներից, գրանիտոիդային ներժայթույթներից: Կան երկաթի, պղնձի, մոլիբդենի, ոսկու, մանգանի, տիտանի, բազմամետաղային հանքավայրեր, շինանյութեր: Բարգուշատի լեռնաշղթան ակտիվ երկրաշարժամետ շրջան է:

Սյունիքի լեռնաշղթան տարածվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, երկարությունը՝ 140 կմ, լայնությունը՝ մինչև 50 կմ: Լեռնաշղթայի մակերևույթին կան բազմաթիվ հրաբխային կոներ՝ կենտրոնական մասում են Ծղուկ (3581մ) և Մեծ Իշխանասար (3550մ) հրաբխային զանգվածները: Շատ են քարացրոնները, կան հնագույն սառցապատման հետքեր, փոքր ու փակ գոգավորություններ:

Վերջիններից շատերը վերածվել են լճերի՝ Մեծ Փորակ, Փոքր Փորակ, Ալ, Սև և այլն: Սյունիքի լեռնաշղթայի ամենաբարձր կետը Թրասարն է՝ 3594մ: Լեռնաշղթան հյուսիսից-արևելքում կարճ, բարձրադիր ու ծալքաբեկորավոր լեռնաճյուղերով միանում է Արցախի լեռնաշղթային: Հարավ-արևմուտքում ու հարավում լանջերը զառիթափ իջնում են դեպի Սիսիանի, Եռաբլրի, Գորիսի, Հագարիի լավային սարավանդները: Կան բազալտի, անդեզիտաբազալտի, վանակատի, պեոլիտի, խարամի հանքավայրեր: Սյունիքի բարձրավանդակից սկիզբ են առնում Որոտան, Արփա, Հագարի, Թարթառ գետերը:

Մորֆոլոգիան և լանդշաֆտը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանը գտնվում է Սյունիքի մարզի Գործիս համայնքի Գործիս քաղաքի վարչական տարածքում: Տարածաշրջանը հիմնականում ներկայացված է դիատոմիտային կավերով, լճային ավազներով, բազալտներով, տրավերտիններով, խճային և ալյուվիալ նստվածքներով: Ժամանակակից ալյուվիալ նստվածքները տեղադրված են Որոտանի ողողահունում, գետի ափամերձ շերտում (1.5մ հզորությամբ խիճ, գլաքար և ավազ): Գետի աջափնյա և ձախափնյա հատվածները հիմնականում իրենցից ներկայացնում են դարավանդներ (տերրասաներ)՝ ներկայացված գլաքարային ապարներով և ավազակավերով: Գրունտային ջրերը գետի աջափնյա մասում տեղադրված են 5 մետրից խորը, իսկ որոշ հատվածների ճահճացումները պայմանավորված են ոռոգման համակարգերից ջրերի արտահոսքով:

Տարածաշրջանը աչքի է ընկնում խիստ կտրտված լեռնային ռելիեֆով: Ըստ ռելիեֆի առաջացման տարածաշրջանում կարելի է առանձնացնել հետևյալ կազմաբանական շրջանները՝

- մինչև 1200 մ - ցածր լեռների ժայռոտ շրջան,
- 1200 - 1750 մ - խիստ մասնատված միջին լեռների ժայռոտ շրջան,
- 1750 - 2250 մ - մասնատված սարահարթերի շրջան,
- 2250 - 3250 մ - խիստ կտրտված մեծ թեքությամբ լեռների շրջան:

Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմանները: Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային խոշոր սալերի բախման գոտում և այս հանգամանքով է բացատրվում տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը: ՀՀ տարածքում հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոտիները՝

- Մերձքուռյան,
- Սոմխեթա-Ղարաբաղի,
- Մերձսևանյան,
- Կապան-Գոգորանի,

- Ծաղկունյաց-Զանգեզուրի,
- Երևան-Օրդուբադի,
- Ուրծ-Վայքի:

Նշված գոտիների սահմաններով են անցնում երկրակեղևի խորքային բեկվածքները: Դրանցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ-Զանգեզուրի և Միջին Արաքսյան (Երևանյան) բեկվածքները: Բեկվածքները թափանցում են երկրակեղևի 40-50 կիլոմետր խորություններ, իսկ երկրակեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ:

Հայաստանի տարածքը բնորոշվում է ուժեղ զարգացած սողանքային շարժընթացներով: Հայաստանի տարածքում գոյություն ունեն 2000-ից ավելի խոշոր սողանքներ (մոտ 500 կմ² տարածք), որոնցից շատերը գտնվում են բնակավայրերի սահմաններում: ՀՀ տարածքի սողանքային տեղաշարժերի տեսակները շատ հաճախ տարանցման ընթացքում փոխակերպվում են փլվածք-սահք-հոսք սխեմայով: Ժամանակակից և անցյալի ակտիվությամբ սողանքային շարժընթացների մեծամասնությունը կապված է ակտիվ խզումնային գոտիների հետ, որոնց միջոցով տեղի են ունենում դանդաղ և երկրաշարժածին տեղաշարժեր: Երկրաշարժածին սողանքներին բնորոշ է որոշակի գոտիականություն՝ պայմանավորված խզումնային գոտիների սեյսմիկ ռեժիմի տարբերություններով, լանջերի առավելագույն ձևախախտումներով և դրանց կայունության խախտմամբ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սեյսմատեկտոնական պայմանները բարդ են: Տարածքի սեյսմատեկտոնական պայմանների գնահատման ընթացքում խիստ կարևորվում է ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի ելակետային արժեքների որոշումը: Տեղանքի շրջակայքում ակտիվ տեկտոնական ճեղքերի առկայության պայմաններում հաշվարկված է գրունտների առավելագույն արագացումները, որոնք տատանվում են 0.2-0.4 սահմաններում (8 բալ-9 բալ):

5.2 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման համաձայն:

Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Գորիս համայնքում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Գորիս համայնքի բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ օգտվելով «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի բնակչության քանակից: Այսպիսով, քանի որ

Գորիս համայնքի բնակչության թիվը 2017թ. տվյալներով մոտ 20.000 մարդ է, ուստի կունենանք հետևյալ պատկերը՝

- Փոշի- 0.095 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂) – 0.006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂) – 0.033 մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)- 1.1 մգ/մ³:

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում:

5.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլեկտրաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «զերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Տարածաշրջանը պատված է մանր գետակների ցանցով: Բոլոր գետերը և գետակներն ունեն լեռնային բնույթ, սնվում են ստորգետնյա, ձնհալքերի և աղբյուրների ջրերով: Դրանք իրենցից ներկայացնում են տիպիկ լեռնային, արագ հոսքով գետեր, որոնք պարունակում են մեծ քանակությամբ քարեր և ավազներ: Հոսքի

ուղղվածությունը մեծամասամբ արևմուտքից արևելք է և հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք:

Գլխավոր գետը Որոտանն է: Որոտան (Բարգուշատ) գետը սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակից և թափվում է Արաքսի մեջ: Երկարությունը 178 կմ է, ավազանը՝ 5650 կմ²: Լեռնային գետ է, հոսում է կոր կանիոնով: Անկումը 1 կմ-ի վրա 16 մ է: Խոշոր վտակներն են՝ Սիսիան, Լեռնաշեն, Գորիս, Հակարի: Գետը ունի խառը սնում (50%-ը ստորգետնյա ջրեր): Ռեժիմն անկայուն է, հորդանում է գարնանն ու ամռան սկզբին (հոսքի ավելի քան 60%-ը): Տարեկան միջին ծախսը 21.5 մ³/վ է, տարեկան հոսքը՝ 680 մլն.մ³: Ձմռանը որոշ հատվածներում սառցակալում է: Գետը սղինատար է, ջրերը՝ լավորակ: Որոտանի վրա են Սպանդարյանի, Անգեղակոթի, Տոլորսի և Շամբի ջրամբարները: Կառուցված է ՀԷԿ-երի կասկադ (Տաթևի, Շամբի, Սպանդարյանի և այլն): Գետի սնումը խառն է, ջրի կեսից քիչ պակաս՝ մոտ 40% ստացվում է լճակներից ու աղբյուրներից, որոնք բխում են առավելապես ձախափնյա լանջից, ստորերկրյա ջրերով հարուստ Սյունիքի բարձրավանդակից: Որոտանը համեմատաբար ջրառատ գետ է: Նրա տարեկան հոսքը կազմում է մինչև 600-700 միլիոն մ³: Որոտանի հոսանքը սրընթաց է, ունի հունի մեծ անկում, որը կազմում է 0.012, այսինքն՝ մեկ կիլոմետրին 12 մետր:

Տարածաշրջանի գետերը կազմում են Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մաս: Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Կատարված դիտարկումների արդյունքները ներկայացվում են ստորև .

Գարձևան գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս), Միսիան քաղաքից վերև հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Միսիան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Միսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գործիս քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գործիս քաղաքից ներքև հատվածում՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Հարավային ՋԿՏ-ի բոլոր բնադրյուրներում, բացառությամբ Շաքիի N532 աղբյուրի, նկատվում է ջրերի ծախսի նվազման միտում: Սպանդարյան, Գորայք, Գործիս և Անգեղակոթ համայնքների N537, N529, N899, N1175, N1323 դիտակետերում ջրի ծախսի նվազումները տատանվել են 0.03-0.74լ/վ սահմաններում: Շաքիի N532 աղբյուրի ջրի ծախսը ավելացել է՝ հասնելով դեկտեմբեր ամսին 21.45լ/վ-ի:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում: Հարավային ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացումը, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, ջրային ռեսուրսների աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում:

5.4 Հողօգտագործում և հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի հողածածկույթը ներկայացված է հիմնականում անտառային և լեռնային սևահողերի տիպերով, ընդ որում անտառային տիպը ներկայացված է անտառային դարչնագույն կրազուրկ ենթատիպով, իսկ լեռնային սևահողը՝ կրազուրկ կավային (սովորական), կրազուրկ

կապակցված և կարբոնատային խճային ենթատիպերով: Անտառային դարչնագույն կրագուրկ հողերը հիմնականում ձևավորվել են պրոֆիրիտների և տուֆաբրեկչիաների հողմնահարման նյութերի՝ դելյուվիալ-կարբոնատային, կրագուրկ կավերի, կավաավազների վրա:

Այս տիպի հողերը բնորոշվում են պրոֆիլի միջին մասի կավայնացմամբ, զգալի քարքարոտությամբ, կավ-ավազային և կավային մեխանիկական կազմով, զգալի հումուսացվածությամբ (4-10%), մեծ կլանման ծավալով (30-44 մգ/էկվ), կարբոնատների զգալի պարունակությամբ, բավարար ջրաֆիզիկական հատկություններով: Այս տիպի հողերն իրենց բերրիության պայմաններով գրավում են շագանակագույն հողերի և սևահողերի միջին տեղը, հիմնականում օգտագործվում են գյուղատնտեսական (վարելահող, այգի, խոտհարք, արոտ) նպատակներով, ունեն ռոռզման կարիք:

Լեռնային սևահողերը (տափաստանային գոտու) բնորոշվում են հումուսի մեծ պարունակությամբ (մինչև 12%), միջինից բարձր (կլանունակությամբ) կլանման ծավալով (35-55 մգ/էկվ), չեզոք (հիմնակնում), ինչպես նաև թույլ թթվային և թույլ հիմնական ռեկցիայով (pH 6.0-8.2), ինչպես նաև բարձր ազրեգատայնություն (50-70%) և ստրուկտուրագոյացման մեծ պոտենցիալով (90-95%): Մեծ մասամբ այդ հողերն ունեն ծանր կավաավազային և թեթև կավային մեխանիկական կազմ, փոշեկարբոնատային պրոֆիլ, վերից վար կրի քանակի աստիճանական ավելացումով հանդերձ, գիպսագուրկ և աղագուրկ են: Սևահողերը հարուստ են համախառն ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորով (0.15-0.25%) և կալիումով (1%): Ունեն փոքր ծավալային (1-1.2) և միջին տեսակարար կշիռներ (2.45-2.60), միջինից բարձր ծակոտկենություն (50-60%): Այդ տիպի հողերն ունեն բարձր կենսաբանական կայունություն, օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով (վարելահող, այգի), ունեն ռոռզման կարիք:

Տարածաշրջանի հյուսիս-արևմտյան և արևմտյան մասերում տարածված է լեռնային մարգագետնա-տափաստանային հողերի տիպը (մարգագետնա-տափաստանային տիպիկ խճային ենթատիպը): Այս տիպի հողերը ֆիզիկա-քիմիական

հատկանիշների տեսակետից բնորոշվում են նշանակալից հումուսացվածությամբ (կուտակման հորիզոնում հումուսի քանակը հասնում է 8-13%-ի), պրոֆիլի կրագերծվածությամբ, լավ ագրեգատացվածությամբ, կլանման մեծ ծավալով (30-50 մգ/էկվ), չեզոք կամ թույլ թթվային ակտիվ ռեակցիայով, ծանր կավաավազային և կավային մեխանիկական կազմով:

Գորիս համայնքի հողային ռեսուրսները կազմում են 5039 հա, որից

- գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 4035 հա,
- բնակավայրերի հողերը՝ 587 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը՝ 49 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը՝ 5 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 58 հա,
- հատուկ նշանակության հողերը՝ 24 հա,
- անտառային հողերը՝ 255 հա
- ջրային հողերը՝ 28 հա:

Գառուցապատման ենթակա տարածքը հանդիսանում է Գորիս համայնքի N6 հիմնական դպրոցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույք: Հողամասն՝ ըստ նպատակային նշանակության բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Գործունեության տարածքը յուրացված է տարածքի կառուցապատմամբ, իսկ ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն գործունեության տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Հողային համակարգերի աղտոտվածությունը քիչ հավանական է:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ տարածքի հողային ռեսուրսների վրա չեն կանխատեսվում, քանի որ նախագծվող

դպրոցը կկառուցվի տարածքի արդեն իսկ հին դպրոցի շենքով յուրացված հողամասում, որտեղ բուսահողը բացակայում է:

5.5 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսականության գերակշռող ձևը լեռնային տափաստանների և մարգագետինների բուսական աշխարհի ներկայացուցիչներն են, առանձին տեղամասերում նկատվում է գերարածեցման հետևանքով առաջացած բուսածածկույթի զգալի ճնշվածություն, նոսրացում և տեսակային կազմի աղքատացում: Տարածաշրջանի բարձրադիր տեղամասերում, որոնք ավելի քարքարոտ են և հարմար չեն որպես արոտավայր, բուսածածկը թեև ամբողջությամբ չի ծածկում տեղանքը և կազմում է առանձին կղզյակներ, սակայն աչքի է ընկնում տեսակային բազմազանությամբ: Ցածրադիր վայրերում հողի բերրի հողաշերտը հզոր է, բույսերը բարձրահասակ են:

Տարածաշրջանի գլխավոր ծառատեսակներն են՝ արևելյան և վրացական կաղնին, բոխին, իսկ ուղեկցողներն են՝ հացին, սրատերև ու դաշտային թխկին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են կաղնու և բոխու խառը ծառուտների կազմավորմանը, իսկ երբեմն էլ՝ ձևավորում են միատարր կամ խառը փոքր ծառուտներ: Ցածր լեռնային գոտում անտառային բուսականությունը ներկայացված է հիմնականում ցածրաբուն կաղնու ծառուտներով, որոնց կազմում զգալի մասնակցություն ունեն սրապտուղ և սովորական հացին, վրացական ու դաշտային թխկին և այլ տեսակներ: Թփերից ավելի շատ հանդիպում են շլորենին, սզնին, մասրենին, մոշենին և այլն:

Միջին բարձրություններում (1200-1400 մ) գերիշխում են հիմնականում վրացական կաղնու անտառները, որոնց բնորոշ է խառը կազմ՝ բոխու, հացենու, թխկու, ինչպես նաև անտառային խնձորենու ու տանձենու մասնակցությամբ, իսկ ավելի բարձր՝ խոշորատեղ կաղնին: Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում հանդիպում են ծառաբույսերի 180 տեսակներ, որոնց մոտ 80%-ը տարածված են Գործիս անտառտնտեսության տարածքում, ընդ որում տեսակային կազմի գերակշռող մասը

հանդիպում 1300-1600 մ բարձրություններում, որը բացատրվում է խոնավության ու ջերմության ռեժիմների լավագույն զուգակցմամբ:

Տարածաշրջանում ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակներն են՝

- Անթառամ պալլասի (*Helichrysum pallasii*)
- Կղմուխ օշեի (*Inula aucherana*)
- Շնկոտեմ զանգեզուրի (*Thlaspi zangezorum*)
- Մեխակ անհրապույր (*Dianthus inamoenus*)
- Մատուտակ մերկ (*Glycyrrhiza glabra*)
- Վիշապագլուխ ողկոյգավոր (*Dracocephalum botryoides*)
- Ունաբ (*Zizyphus jujuba*)

Կենդանական աշխարհ: Բավականին բազմազան ու հարուստ է տարածքի կենդանական աշխարհը, որին նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, քարանձավների առկայությունը, աղբյուրների առատությունը, Արաքսի ավազանի մոտ լինելը: Տարածաշրջանում շատ են հանդիպում թռչունները, ինչը պայմանավորված է հետազոտվող տարածաշրջանի ռելիեֆի բազմազանությամբ՝ դաշտավայր, քարքարոտ բլրալանջեր, որոնք հարմար բնադրավայր են արտույտների, քարաթռչնակների և այլ մանր տափաստանային թռչունների համար: Շատ են նաև գիշատիչ թռչունները, որոնց կերի բազան մանր կրծողներն են: Տարածաշրջանում կենդանական աշխարհից հանդիպում են նաև՝ այծյամը, վայրի խոզը, գորշ արջը, գայլը, աղվեսը, նապաստակը, կզաքիսը, սկյուռը, ոզնին, դաշտամուկը, միջատների ու բզեզների բազմաթիվ տեսակներ և այլն: Տարածաշրջանում առավել հաճախ հանդիպող կենդանատեսակներն են՝

- Թխակապույտ աղավնին (*Columba livia gaddi*)
- Մեծ ճուռակը (*Buteo buteo*)
- Տափաստանային ճուռակը (*Buteo rufinus*)
- Դաշտային ճնճղուկը (*Passer montanus*)

- Սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe*)
- Սևավիզ քարաթռչնակը (*Oenanthe finschii*)
- Սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala*)
- Դաշտային արտույտը (*Alauda arvensis*)
- Եղջրավոր արտույտը (*Eremophila alpestris*)
- Կանեփուկը (*Carduelis cannabina*)
- Սովորական նսպուկը (*Carpodacus erythrinus bella*)
- Սովորական հողմավար բազեն (*Falco tinnuncius*)
- Հոպոպը (*Upupa epops*)
- Ռադդեի ժայռային մողես (*Radde's Lizard*)
- Վալենտինի ժայռային մողես (*Darevskia valentini*)
- Միջին մողես (*Lacerta media*)
- Համեստ էյներիս (*Eirenis collaris*)
- Բազմերանգ իժանման սահնօձ (*Hemorrhoids ravergieri*)
- Արևելյան քառաշերտ մազլցող սահնօձ (*Elaphe sanromates*)
- Սովորական պղնձօձ (*Coronella austriaca*)

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները հետևյալն են՝

- Տափակ ճպուռ (*Sympetrum depressiusculum*)
- Գառնանգը (*Gypaetus barbatus Linnaeus*)
- Գիշանգը (*Neophron percnopterus Linnaeus*)
- Սպիտակագլուխ անգը (*Gyps fulvus*)
- Օձակեր արծիվ (*Circaetus gallicus*)
- Ցախաքլորավոր (*Accipiter gentilis*)
- Փոքր ենթարծիվ (*Aquila pomarina*)
- Քարարծիվ (*Aquila chrysaetos*)
- Գաճաճ արծիվ (*Hieraetus pennatus*)

- Սապսան (*Falco peregrinus Tunstall*)
- Անդրկովկասյան փասիան (*Phasianus colchicus*)
- Կիսասպիտակավիզ ճանճոբս (*Ficedula semitorquata*)
- Մեհելիի պայտաքիթ չղջիկ (*Rhinolophus mehelyi Matschie*)
- Բլազիի պայտաքիթ (*Rhinolophus blasii Peters*)

Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել Գորիսի N6 հիմնական դպրոցի հողատարածքի սահմաններում, որը տեղակայված է արդեն իսկ յուրացված և զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանը տեղակայված չէ բնության հատուկ պահպանվող տարածքում: Մոտակա հատուկ պահպանվող տարածքները՝ «Գորիսի» և «Սև լիճ» պետական արգելավայրերն են:

«Գորիսի» պետական արգելավայրը բնության հատուկ պահպանվող տարածք է՝ Հայաստանի Հանրապետության 26 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1972թ-ին, ունի 1850հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2800մ բարձրություններում: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի (այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ) պահպանության նպատակով:

Սև լիճը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռնաստորոտի խառնարանային մասում՝ 2658 մ բարձրության վրա: Անհոսք քաղցրահամ լիճ է: Մակերեսը մոտ 240հա է, երկարությունը՝ 1.6կմ, լայնությունը՝ 1.2կմ, առավելագույն խորությունը մոտ 7.5մ է, ջրի ծավալը՝ ավելի քան 9մլն մ³: Լիճը կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, որոնք լցվել են լեռան խառնարանը: Լիճը շրջապատող տարածքը

ծածկված է բուսականությամբ, որը բնորոշ է ալպյան մարգագետիններին: Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները, 102 տիպի անոթավոր բույսերն ու ալպյան գոտու բուսական և կենդանական համակեցություններ: «Սև լիճ» արգելավայրը հիմնադրվել է ՀՀ կառավարության 12.10.2001թ-ի թիվ Ն-975 որոշմամբ՝ ՀՀ կառավարության 17.10.1987թ. թիվ 717 որոշմամբ ստեղծված արգելոցի բազայի վրա:

5.6 Պատմամշակութային հուշարձաններ

Գորիս քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում ներառված է 278 հուշարձան, որոնց մեծ մասը հնագույն բնակատեղիներ են և բնակելի տներ: Գորիս քաղաքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձաններից են Հին Կյորես քարանձավային բնակատեղին, Սբ. Հռիփսիմե և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները:

Հին Կյորես գյուղատեղին տարածվում է Գորիս քաղաքից արևելք, համանուն գետի ձախ ափին: Գյուղատեղին հատկապես աչքի է ընկնում իր ինքնատիպ միջնադարյան եկեղեցիներով ու մատուռներով, ժայռափոր կացարան-բնակարաններով, մելիքական ապարանքներով, բնակելի ու հասարակական նշանակության շինություններով: Ներկայիս բուն քաղաքի տեղում մինչև 1870-ական թվականները եղել է անբնակ տարածք: Հին Կյորեսը լքվել է XX դարի սկզբներին:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին միանավ բազիլիկ եկեղեցի է, որը կառուցվել է 1776 թվականին: Գտնվում է Սյունիքի մարզի Հին Գորիս գյուղատեղիիում: Եկեղեցու պատերը անմշակ բազալտով են շարված: Մուտքերի և լուսամուտների շրջանակները, պատերի անկյունային հատվածները և ներսի միակ որմնակամարը շարված են հիանալի մշակված բազալտով: Ավելի ուշ շրջանում ներսից և դրսից ծեփվել է կրաշաղախով:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1897 թվականին Գորիսի Մելիք-Հյուսեինյան իշխանական տոհմի ներկայացուցիչների նախաձեռնությամբ՝

Վարարակն գետի ձախ ափին տարածվող Հին Գորիս գյուղի եկեղեցուց օգտվելու անհարմարության, ինչպես նաև քաղաքում գործող ռուսական եկեղեցու առկայության պատճառով: Դրամական միջոցների հանգանակությանը մասնակցել է ողջ քաղաքը: Ըստ բանավոր վկայությունների՝ եկեղեցու կառուցումը ղեկավարել է իտալահայ ճարտարապետ: Եկեղեցին 1903 թվականին օծվել է Խրիմյան Հայրիկի կողմից, բացվել է 1904 թվականին, սակայն գմբեթ և խորան չի ունեցել:

Դպրոցի բակում է գտնվում Սերո Խանգաղյանի կիսանդրին: Հուշարձանը տեղադրվել է 2004թ. և ընդգրկված է Գորիսի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Քաղաքի մյուս պատմամշակութային հուշարձանները նախատեսվող գործունեության տարածքից գտնվում են նորմատիվներով նախատեսված և ավել հեռավորության վրա: Նախատեսվող գործունեության տարածքում հնագիտական շերտերի առկայությունը բացառվում է, հաշվի առվելով, որ տարածքը կառուցապատված է: Հարկ է նշել նաև, որ Գորիսի N6 հիմնական դպրոցի տեղամասի տեղազննության ընթացքում պատմամշակութային հուշարձաններ չեն հայտնաբերվել:

Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրություններ, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում:

5.7 Ժողովրդագրական կազմ և բնակչություն

Գորիս բնակավայրը գտնվում է Երևանից 236 կմ հարավ՝ Վարարակն գետի ափին՝ 1370մ բարձրության վրա: Տարածքը 6 կմ² է, բնակչությունը՝ 20.39 հազար մարդ. (2017-ի հունվարի 1-ի դրությամբ):

Բնակչությունը զբաղվում է արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Համայնքում գործում են մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ: Դրանցից են «Գամմա», «Ջանգեզուր», «Գորիսի միկրոշարժիչ» ԲԲԸ-ները, գործում են

աննդարդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի մի շարք ձեռնարկություններ, կան քարամշակման արտադրամասեր: Քաղաքում հատկապես զարգացած է էներգետիկայի արտադրությունը, հանձինս «Որոտան ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ի:

Գործիսը Սյունիքի մարզի խոշոր կրթական ու մշակութային կենտրոններից է: Գործիսում գործում է երկու ավագ, չորս հանրակրթական և մեկ հատուկ դպրոց: Գործող բարձրագույն ուսումնական հաստատություններն են Գործիսի պետական համալսարանը, Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գործիսի մասնաճյուղը, «Սյունիք» ինստիտուտը և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ Մանկավարժական քոլեջը ու Գործիսի գյուղատնտեսական պետական քոլեջը: Գործում են 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններ և 5 արտադպրոցական ուսումնական հաստատություններ:

Առողջապահական հաստատություններ են հիվանդանոցը, 2 պոլիկլինիկաները, մարզային արյան փոխներարկման կայանը և «Ախտորոշում» բժշկական միավորումը:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները գնահատվում են դպրոցի ներկայիս շենքի ապամոնտաժման և նոր դպրոցի կառուցման գործողությունների ընթացքում, սակայն ազդեցությունները կլինեն ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը և տեղայնացվածությունը՝ ընգրկելով միայն դպրոցի տարածքը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝

կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ հիմնական դրական ազդեցությունները.

- ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում,
- դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզահրապարակների,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքային ու ուսումնական գործընթացները կազմակերպել և անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

6.1. Օղային ավազանի աղտոտում

Շինարարական գործունեության ընթացքում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ, որտեղ՝}$$

K1-ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2-ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K3-ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K4-ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5-ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6-ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G–ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 4 ամիս կամ 4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 24520մ³ կամ $G=24520\text{մ}^3:704=34.8\text{մ}^3/\text{ժամ}$, իսկ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $34.8 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{ տ}/\text{մ}^3 = 59.16 \text{ տ}/\text{ժամ}$:

$$Q = (0.05 \times 0.02 \times 2.5 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 59.16 \times 10^6) / 3600 = 1\text{գ}/\text{վ}$$

Այսպիսով, գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի.

$$1\text{գ}/\text{վ} \times 704 \text{ ժ}/2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 2.5\text{տ}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Կանխատեսվում է, որ նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակում աշխատանքային մակերեսների ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),
- սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:

Շինարարական աշխատանքների հետևանքով մթնոլորտ կարտանետվեն մթնոլորտն աղտոտող որոշ նյութեր, մասնավորապես շինարարական տեխնիկայից արտանետվող հետևյալ նյութերը՝

- Ածխածնի երկօքսիդ (CO_2)
- Ածխածնի օքսիդ (CO)
- Ազոտի օքսիդներ (NO_x)
- Ածխաջրածիններ (HC)
- Ծծմբի երկօքսիդ (SO_2)
- Փոշու մասնիկներ (PM_{10} և $PM_{2.5}$):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքը չի հանդիսանում ակտիվ քաղաքաշինական կամ արտադրական գոտի, նշված արտանետումները չեն գերազանցի թույլատրելի անցումային շեմերը:

Օդային ավազանի աղտոտվածության կանխմանն ուղղված միջոցառումների համալիր ցանկը ներկայացված է Բնապահպանական կառավարման պլանում (Տե՛ս հավելված 3):

Ծրագրի շրջանակում հարակից բնակելի և հասարակական շենքերից ստացված բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

6.2. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Դպրոցի նոր շենքի կառուցման և հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր կծառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից՝ հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շինհրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի գրասենյակ, հանդերձարան, լվացարան-ցնցուղարան, փակ պահեստ, ինչպես նաև ճաշարան, բիոզուգարան, աղբի տարրաներ և այլն:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները նվազագույն կլինեն, քանի որ մոտակայքում գետեր չկան: Սակայն հնարավոր է, շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով, շինարարական հոսքաջրերի առաջացում, ինչպես նաև շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսա-կենցաղային հոսքաջրերի և պինդ թափոնների առաջացում:

6.3. Թափոնների առաջացում և կառավարում

Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի **ընդհանուր հողային հանույթը կազմում է 24520 մ³ է, որից ետլիցքը կազմում է 5450մ³: Մնացած 19070 մ³** քանակն իրենից ներկայացվում է փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, որը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, որի վերաբերյալ

տեղեկանքը Գործիսի համայնքապետարանից նախատեսվում է ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի, շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ նոր դպրոցի շենքի կառուցման, դպրոցի հին շենքի ապամոնտաժման և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող կազմով թափոնների առաջացում.

Աղյուսակ 7. Թափոնների տեսակները ըստ վտանգավորության դասի և քանակի

| Թափոնի անվանում | Ծածկագիր | Վտանգավորության դաս | Քանակ |
|--|----------------------|---------------------|------------|
| Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | 9120040001004 | IV | մոտ 3 տ |
| Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող | 3140110008995 | V | 19070 իւ.մ |
| Շինարարական աղբ | 9120060101004 | IV | 120 իւ.մ |
| Շենքերի քանդումից առաջացած շին աղբ | 9120060101004 | IV | 5000 տ |
| Եռակցման խարամ | 3140480001994 | IV | - |

Նախատեսվող գործունեության ընթացքում քսայուղերի և հեղուկ վառելիքի թափոնների առաջացում չի կանխատեսվում:

Ապամոնտաժման ընթացքում գոյացող կրկնակի օգտագործման համար երկրորդային հումքեր առկա չեն:

Գործունեության ընթացքում ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 5000 տ, շինարարական աղբը՝ շուրջ 120 մ³, իսկ փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ 19070մ³: Վերջիններիս հեռացումն ու տեղադրումը կիրականացվի

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գործիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում, որի վերաբերյալ համաձայնությունը նախատեսվում է ձեռք բերել մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Թափոնների փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

6.4. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակները գնահատվում են գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում: Հաշվի առնելով այն, որ դպրոցի քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով, այն է՝ բացառելով որևէ խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-մեխանիզմները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնականում աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների ազդեցություններ հարևան ազդակիրների վրա չեն կանխատեսվում: Շինարարական աշխատանքների ընթացքում կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը պետք է վերացվի կամ փոխհատուցվի կապալառու ընկերության սեփական միջոցների հաշվին:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (զլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների

մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասը ներկայացված են ԲԿՊ-ում: Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ իրականացնել միայն բողոքների դեպքում:

6.5. Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա

Հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոյի (շարժական կամ անշարժ) անսպասելի հայտնաբերման դեպքում, համաձայն ՀՀ «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի (1998թ.) և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

6.6. Աշխատանքի անվտանգություն

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվելու աշխատանքային անվտանգության ապահովմանը, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի

«Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:
- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննություն և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:

Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներն այլն:

Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության կանոնների մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):

Տանիքի և բարձրության վրա աշխատանքների իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:

Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:

Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուրոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:

Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագության գերազանցման դեպքում:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ-ում պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Ծրագրի համար մշակված ԲԿՊ՝ մեղմացնող միջոցառումները և մոնիտորինգի պլանն, ամբողջական ներկայացված են Հավելված 3-ում և Հավելված 4-ում:

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հիմնական բնապահպանական, ինչպես նաև աշխատանքի և առողջության ապահովման

միջոցառումները, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթաձրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտոկա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

- տարածքի կանաչապատ գոտիները կհամալրվեն արժեքավոր բուսականությամբ:

Հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային ուղիղ արժեքը (առանց հարկերի) գնահատվում է մոտ 1.5 մլն. ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում է կենցաղային և շինարարական աղբի հեռացման, ծառերի տնկման և կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված դպրոցի նախագծի ծավալաթերթերում: Բնապահպանական կառավարման պլանում ներկայացված մնացած միջոցառումները կապալառուն կիրականացնի օժանդակ ծախսերի գումարից, որը կազմում է ընդհանուր նախահաշվի մոտ 2%-ը:

7.2. Մոնիտորինգ

ՀՏՁՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏՁՀ-ի բնապահպանության մասնագետները իրականացնելու են դաշտային ստուգայցեր՝ դպրոցի շինարարական տեղամաս ամսական երկու անգամ: Մոնիտորինգային արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողության շրջանակներում կիրականացվի ամենօրյա հսկողություն, որը կներառի նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և հայտաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ժամանակին կտեղեկացվի ՀՏՁՀ-ին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներն իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում:

ՀՏՁՀ-ի կողմից նախատեսվող գործունեության իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ (ԲԱՄ): Շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am):

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 3-ին, ժամը՝ 14:00-ին, Սյունիքի մարզի Գործիս համայնքի Գործիս բնակավայրի N6 հիմնական դպրոցի շենքում իրականացվել է նոր դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում:

Հանդիպմանը մասնակցել են համայնքապետարանի ներկայացուցիչներ, դպրոցի տնօրենը, ուսուցչական անձնակազմը, ներկայացուցիչներ պատվիրատու, նախագծային և ՇՄԱԳ իրականացնող կազմակերպություններից, ինչպես նաև Գործիս համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Առավոտ» օրաթերթի 31.08.2024 համարում:

Հանրային քննարկամ կազմակերպման և անցկացման համար լիազորված անձ է նշանակվել Գործիս համայնքի համայնքապետարանի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի պետ Գարեգին Փարսյանը:

Շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները Գործիսի համայնքապետարան ուղարկել նաև գրավոր:

Հանդիպման արձանագրությունը, մասնակիցների ցուցակը, հանրային քննարկման ժամանակ իրականացված լուսանկարները, ինչպես նաև համայնքի ավագանու հանձնառությունը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ներկայացվում են սույն ՇՄԱԳ հաշվետվությանը կից (Տե՛ս Հավելված 5):

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «11» Պեկտեմբերի 2013 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Գորիս ք. Գետափնյա փողոց 1 թիվ 6 դպրոցի շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՎԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքապետի որոշում 22/01/2002թ. թիվ 09, Հատակագիծ 21/01/2002թ., կանոնադրություն

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԼՈՒԹՎԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-003-0072-0003

Մակերեսի չափը (հա)՝ 1.0016

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝


| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|-----|--------------------------|--------|----------------|---------------------------|
| 1 | 09-003-0072-0003-001-000 | Դպրոց | 4793.2 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |


Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարապետ Չաղայան
գրադեցրած պաշտոնը՝ Սյունիք ՏՄ անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ





ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

| Օրագրի Գործողություններ | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ | Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու մարմին |
|--|--|---|---------------------|
| Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ | | | |
| 1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում | Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ: | 1.1. Դպրոցի նոր շենքի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ս.թ. հոկտեմբերի 3-ին, ժամը 14:00-ին, Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի N6 հիմնական դպրոցի շենքում 1.2. Հանրային քննարկման հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 31.08.2024 համարում: | «Լուր» ՍՊԸ |
| 2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում | ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում: | 2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում: | «Լուր» ՍՊԸ |
| Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ | | | |
| Առողջություն և աշխատանքային անվտանգություն | | | |
| 3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները | ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և դպրոցի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է: | 3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ): 3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն): 3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում: 3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ): | «Լուր» ՍՊԸ |

| | | | |
|---|--|---|-------------------|
| | | <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p> | |
| Հանրության հետ կապ և հանրային իրազեկում | | | |
| <p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p> | <p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p> | <p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>4.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p> | <p>«Լուր» ՄՊԸ</p> |
| Շրջակա միջավայրի պահպանություն | | | |
| <p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p> | <p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին. աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p> | <p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափազրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացումը:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափազրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանակացույցի:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սահմանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:</p> | <p>«Լուր» ՄՊԸ</p> |

| | | | |
|---|--|--|-------------------|
| | | <p>5.2.3. Մեքենաների ապահովում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակայներով, ապահովում:</p> | |
| Շինարարական հրապարակի կազմակերպում | | | |
| <p>6. Շինհրապարակի կազմակերպում</p> | <p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ</p> | <p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>6.3. Անհրաժեշտ է նախատեսել ավազի, ցեմենտի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով:</p> <p>6.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.5. Անհրաժեշտ է իրականացնել շենք ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:</p> <p>6.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագուշացնող նշաններ:</p> <p>6.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:</p> | <p>«Լուր» ՍՊԸ</p> |
| Երթևեկության կառավարում | | | |
| <p>7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ</p> | <p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • երթևեկության խափանումներ • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական սարքավորումների փոխադրամիջոցների ծանր և կողմից ճանապարհներին վնաս | <p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> | <p>«Լուր» ՍՊԸ</p> |

| | | | |
|--|---|--|-------------------|
| | | <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում և կայանատեղին ծածկել ավազե կամ խճալին շերտով՝ հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:</p> | |
| Արտակարգ իրավիճակների կառավարում | | | |
| <p>8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p> | <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p> | <p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>8.6. Շին. աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները</p> | <p>«Լուք» ՍՊԸ</p> |

| | | | |
|--|--|---|-------------------|
| | | <p>դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում:</p> | |
| Թափոնների և նյութերի կառավարում | | | |
| <p>9. Շինհրապարակ շինարարական աշխատանքներ</p> | <p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p> | <p>9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>9.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>9.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով:</p> <p>9.5. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն:</p> <p>9.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p> | <p>«Լուր» ՍՊԸ</p> |
| Աշխատողների վերապատրաստում | | | |
| <p>10. Աշխատողների վերապատրաստում</p> | <p>Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p> | <p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ;</p> | <p>«Լուր» ՍՊԸ</p> |
| Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում | | | |

| | | | |
|--|---|---|-------------------|
| <p>11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում 12. Կանաչապատում</p> | <p>Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը , թափոնները և այլն:</p> | <p>12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն: 12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները: 12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը: 12.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները: 12.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Վաղարշապատի համայնքապետարանի հետ:</p> | <p>«Լուր» ՍՊԸ</p> |
| <p>Հ Ե Տ Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն Փ Ո Ի Լ</p> | | | |
| <p>13. Թերությունների վերացման աշխատանքներ</p> | <p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p> | <p>13.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճառ իրականացումը:</p> | <p>«Լուր» ՍՊԸ</p> |

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

| Վայր/ Գործողություն / Փուլ | Մոնիտորինգի ենթակա պարամետրեր | Մոնիտորինգի կետեր | Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ | Բնապահպանական գործողությունների ցուցանիշ | Պատասխանատուն ը | Մոնիտորինգի հաճախականությ ուն |
|---|---|---|--|--|--------------------|--|
| Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ | | | | | | |
| 1. Հանրային լումներ և կապը հանրության հետ | - Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկացվածությունտ ԲԱՄ-ի վերաբերյալ | շին. հրապարակ | - փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր շին տեղամասեր, - հանրային լումներ, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ | Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան | «Լուր» ՄՊԸ | Հանրային լումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը |
| 2. Երջակա միջավայրի պահպանություն | - փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում | շին. հրապարակ, | - ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն: | - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում | «Լուր» ՄՊԸ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր | - շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը: | Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ: | - փաստաթղթերի ստուգում | - Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը | «Լուր» ՄՊԸ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը | - երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ: | Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շին. հրապարակի մոտեցման մուտքերը | - փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր | - Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը | «Լուր» ՄՊԸ | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |

| | | | | | | |
|---|--|--|--|--|-------------------|--|
| <p>5. Թափոնների և շին. նյութերի կառավարում</p> | <p>- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում</p> | <p>Շին. հրապարակ</p> | <p>- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր</p> | <p>- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:</p> | <p>«Լուք» ՍՊԸ</p> | |
| <p>6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում</p> | <p>- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:</p> | <p>Տեղամասեր կատարած ստուգայցեր</p> | <p>- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:</p> | <p>- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:</p> | <p>«Լուք» ՍՊԸ</p> | |
| Շ Մ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Ց ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ | | | | | | |
| <p>7. Թերությունների վերացման աշխատանքներ</p> | <p>- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ</p> | <p>բնակելի համալիրի տարածքի սահմաններում</p> | <p>Չափումներ</p> | <p>Աղմուկի, թրթռումների, հողի և օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:</p> | <p>«Լուք» ՍՊԸ</p> | |
| <p>8. Տարածքի բարեկարգում</p> | <p>Թփերի և այլ բուսականության նորմալ աճ</p> | <p>Բարեկարգման բոլոր տեղամասերը</p> | <p>Ստուգայցեր</p> | <p>Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ</p> | <p>«Լուք» ՍՊԸ</p> | |

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

Ա **Ր** **Մ** **Վ** **Ի** **Տ** **Ի** **Տ**

146/7147/ 31 օգոստոս 2024 շաբաթ

«Պետք է հիմնովին վերանայենք Եվրոտալի

ՎԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձագնացության մասին» ՀՀ օրենքով (21.08.2014թ. ԴՈ-110-Ն), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված՝ 2024թ.վազմանի իսկությունների 3-ին ժամը 14:00-ին, ՀՀ Այրուիցի մարզի Գորիս քաղաքի՝ Սերո համազասկի անվան թիվ 6 հիմնական դպրոցի միասնի դասիչենում տեղի կունենա «ԼՄԹ» ԱՊԸ կողմից ներկայացված ՀՀ Այրուիցի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքում 680 աշակերտի համար դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության մասնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին քննարկում/:

Շահագրգիռ հանրությունը զրավոր կամ էլեկտրոնային եղանակով կարող է՝ Երջակա-ցել առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ՝ էլեկտրոնային փոստի միջոցով՝ corismunicipality@gmail.com Դեղ.՝ +37428425596



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիսքաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի նիստերի դահլիճում կայացած «Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2024թ-ի հոկտեմբերի 03-ին, ժամը 14:00-ին «Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիսքաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Առավոտ» օրաթերթի 2024 թ-ի օգոստոսի 31-ի համարում:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի Տարածքային Ձարգացման Հիմնադրամի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի, նախագծող կազմակերպության («Լուք» ՍՊԸ), նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Ի ՍԻ Ի Քաուբազուս» ՍՊԸ) ներկայացուցիչները:

Գորիսի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 դպրոցի տնօրեն Ա. Գևորգյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության ներկայացուցիչ Մ. Խաչատրյանին:

Մ. Խաչատրյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց ներկաներին, որ քննարկվող նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայնեթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է 2 հանրային քննարկում: Քննարկումների արդյունքում առաջացած առաջարկությունները հաշվի կառնվեն հետագա գործողությունների համար: Այնուհետև Մ. Խաչատրյանը ներկայացրեց ծրագրին և նախագծին վերաբերող որոշ մանրամասներ, հնարավոր բնապահպանական միջոցառումները և ներկաներին հորդորեց տալ հարցեր և ներկայացնել առաջարկներ, այնուհետև խոսքը փոխանցեց Տարածքային կառավարման հիմնադրամի ներկայացուցիչ Արմինե Գաբրիելյանին:

Ա. Գաբրիելյանը նույնպես անդրադարձավ բնապահպանական հնարավոր խնդիրների առաջացմանը և հավաստիացրեց, որ կազմակերպությունը խստագույնս կհետևի շինարարական աշխատանքներին և հնարավոր բնապահպանական խնդիրների դեպքում կիրականացնեն համապատասխան միջոցառումներ:

Նախագծող կազմակերպության ներկայացուցիչ **Ա. Կարապետյանը** ներկայացրեց դպրոցի նախագծման մանրամասները:

Գորիս համայնքի գլխավոր ճարտարապետ **Գ. Փարսյանը** հարց ուղղեց նախագծողներին դպրոցի նախագծում ապաստարանի առկայության վերաբերյալ:


Ա. Կարապետյանը դրական արձագանք տվեց:

Համայնքի քնակիչները հետաքրքրվեցին նաև շինարարական աշխատանքների մեկնարկի և ավարտի վերաբերյալ, որին ստացան սպառիչ պատասխան:

Նախագիծն արժանացավ դրական գնահատականի Գորիս համայնքի քնակիչների կողմից:

Այլ հարցեր չհնչեցին և քննարկումն ավարտեց:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի գլխավոր ճարտարապետ՝  **Գ. Փարսյան**

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

«ԼՈՒՔ» ՍՊԸ-ի տնօրեն՝  **S. Առաքելյան**

Մասնակիցների ցանկ

«ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ք. Գորիսում դպրոցի կառուցում» նախատեսվող գործունեության վերաբերյալ 2024թ-ի հոկտեմբերի 03-ին ժամը 14:00-ին ք. Գորիսի Ս. Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի նիստերի դահլիճում կազմակերպված հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

| N | Անուն, ազգանուն | Կազմակերպություն/պաշտոն | Հեռախոսահամար | Ստորագրություն |
|-----|------------------|-------------------------|---------------|----------------|
| 1. | Վ. Գաբրիելյան | - | 093401840 | [Signature] |
| 2. | Վ. Հարությունյան | ՀԱԴ Բարձրագույն | 094427523 | [Signature] |
| 3. | Լ. Գաբրիելյան | բնակիչ | 096969605 | [Signature] |
| 4. | Ն. Ասրաթյան | ուսույիչ | 077986076 | [Signature] |
| 5. | Յ. Գաբրիելյան | ուսույիչ | 094039029 | [Signature] |
| 6. | Զ. Գաբրիելյան | ուսույիցանի | 77018010 | [Signature] |
| 7. | Ե. Դավթյան | ուսույիչ | 094067890 | [Signature] |
| 8. | Ս. Ծրագյան | ուսույիչ | 096162616 | [Signature] |
| 9. | Զ. Գաբրիելյան | ուսույիչ | 077377988 | [Signature] |
| 10. | Բ. Գաբրիելյան | ուսույիչ | 055524481 | [Signature] |
| 11. | Վ. Վահանյան | ուսույից | 099-535-105 | [Signature] |
| 12. | Ս. Վահանյան | ուսույիչ | 094 09 05 11 | [Signature] |
| 13. | Զ. Գաբրիելյան | ինտերնետ | 077 71 55 15 | [Signature] |
| 14. | Ն. Գաբրիելյան | ուսույիչ | 096223588 | [Signature] |
| 15. | Վ. Գաբրիելյան | ուսույիչ | 099778136 | [Signature] |
| 16. | Վ. Վահանյան | ուսույիչ | 099267608 | [Signature] |
| 17. | | | | |
| 18. | Լ. Ծրագյան | ուսույիցանի | 094 02 35 31 | [Signature] |
| 19. | Ն. Գաբրիելյան | ուսույիչ | 094-8200-68 | [Signature] |
| 20. | Զ. Գաբրիելյան | ուսույիչ | 094-94-23-55 | [Signature] |
| 20. | Զ. Գաբրիելյան | բնակիչ | 077-500-936 | [Signature] |
| 21. | Ս. Ծրագյան | բնակիչ | 094 712 703 | [Signature] |

| N | Անուն, ազգանուն | Կազմակերպություն/պաշտոն | Հեռախոսահամար | Ստորագրություն |
|-----|-----------------------|----------------------------------|---------------|---------------------------|
| 22. | Սևակյան Ստեփանյան | Մասնագետ | 077-400-207 | Բուն |
| 23. | Կարապետյան | ՀՏՀ Վեհաժողով | 094-220050 | Ստորագրություն |
| 24. | Քանին Բարսեղյան | ՀՀ Կարգի ՊՊԲ | 09853 2222 | ՍԵ |
| 25. | Սարգսյան Բարսեղյան | ՀՀ ՊՊԲ Ն. թևարտար | 055 200133 | ՍԵ |
| 26. | Տիրապետ Բարսեղյան | ՊՊԲ ՊՊԲ Ներկայացուցիչ | 094493779 | ՍԵ |
| 27. | Տիրապետ Թադևոսյան | ՊՊԲ ՊՊԲ Տնօրեն | 077467113 | ՏԻ |
| 28. | Կարապետյան Սարգսյան | ՀՀ ՊՊԲ Ն. թևարտար | 033132232 | ՍԵ |
| 29. | Արսյան Սարգսյան | Կարգի պետ | 093606445 | ՍԵ |
| 30. | Գրիգորյան | ԳԻ. Կարգի | 093776030 | ՍԵ |
| 31. | Սարգսյան Կարապետյան | Կարգի կառավարիչ Կարգի ԿՍՍԵ ԲԿ | 041555155 | ՍԵ |
| 32. | Սարգսյան Բարսեղյան | Կարգի կառավարիչ Կարգի | 093328421 | ՍԵ |
| 33. | Սարգսյան Կարապետյան | Կարգի կառավարիչ Կարգի | 093249008 | ՍԵ |
| 34. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 09367363F | ՍԵ |
| 35. | Կարապետյան Կարապետյան | Մասնագետ | 094.092535. | ՍԵ |
| 36. | Սարգսյան Կարապետյան | Քուլտուր | 077.23746. | ՍԵ |
| 37. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 094427777 | ՍԵ |
| 38. | Սարգսյան Կարապետյան | Սեպ | 093913320 | ՍԵ |
| 39. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 098990214 | ՍԵ |
| 40. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 077093235 | ՍԵ |
| 41. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 093231859 | ՍԵ |
| 42. | Սարգսյան Կարապետյան | Սեպ | 077446930 | ՍԵ |
| 43. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 094205404 | ՍԵ |
| 44. | Սարգսյան Կարապետյան | Մասնագետ | 093349712 | ՍԵ |
| 45. | Սարգսյան Կարապետյան | Կառուցում | 077221944 | ՍԵ |

| Ընթացակարգի համար | Վարչության անուն | Տեղ | Հեռախոսահամար | Ստորագրություն |
|-------------------|------------------------------|------------|---------------|----------------|
| 1. | Տարբերակի Գերագույն | Տեղ | 094-700-655 | |
| 2. | Արտադրության Պարտադրություն | Տեղ | 099-644-344 | |
| 3. | Մանուկ Աղյուսակ | Տեղ | 093303108 | |
| 4. | Դրամական Դրամական | Տեղ | 094064564 | |
| 5. | Տնօրենի Կառավարություն | Տեղ | 096555-022 | |
| 6. | Մանուկ Պարտադրություն | Տեղ | 077-800-551 | |
| 7. | Պարտադրության Կառավարություն | Մասնաճյուղ | 094424036 | |
| 8. | Գործարար Վերականգնողական | Տեղ | 098626177 | |
| 9. | Վարչական Արտադրություն | Տեղ | 091731781 | |
| 10. | Մանուկ Արտադրություն | Տեղ | 098094850 | |
| 11. | Մանուկ Վերականգնողական | Տեղ | 097501380 | |
| 12. | Մանուկ Կառավարություն | Տեղ | 077076226 | |
| 13. | Մանուկ Կառավարություն | Տեղ | 096794459 | |
| 14. | | | | |
| 15. | | | | |
| 16. | | | | |
| 17. | | | | |
| 18. | | | | |
| 19. | | | | |
| 20. | | | | |
| 21. | | | | |



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N 213-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԳՈՐԻՍԻ Ս. ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ» ՆՈՐ ՇԵՆՔԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, 16-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետը և Գորիս համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Գորիսի Ս. Խանզադյանի անվան N 6 հիմնական դպրոցի» նոր շենքի կառուցմանը:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
 ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
 ԳԱԼՍՅԱՆ ԱՆԻ
 ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
 ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
 ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
 ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ
 ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
 ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
 ՏՈՒՌՉՅԱՆ ԱՐՏԱԿ
 ՏՈՒՌՉՅԱՆ ՌՈՒԶԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

2024թ. նոյեմբերի 15
ք. Գորիս




ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆՂՈՐՐԱԳԻՐ




Ամերիաբանկ ՊԲԸ
 Կապույտ Երկուցուսն Հ
 Քաղաքում 14-37410 501111
 Տնօր. Ել. փոստ՝ info@ameriabank.am

Ցայտնակ: 08/11/2024 14:22 (UTC+04:00)

| Վճարումներ և փոխանցումներ | | | | | | | | | | | |
|---------------------------|------------|-------------|--------------------|------------------|---|---------------|------------|-------|---|-----------------|------------|
| Թ | Ամսաթիվ | Փաստաթղթի N | Փաստաթղթի տիպ | Կաշիվ/Քարտ | Ըստ հաշվառման | Ըստ հաշվառման | Պատճառ | Արժեք | Նկարագր | Փաստաթղթի կիճակ | ԱՆ |
| | 07/11/2024 | 000240 | Բյուջեից փոխանցում | 1570099964460100 | Շրջանային միջակայքի կուտակումները և կործանումները, իջեցումներ և միջակայքի նախատեսումներ | 999905000196 | 900.000.00 | AMD | «Մ Երևանի մարզի Պետի համայնքի Գործընթացային համագործակցության N 6 հիմնական դպրոցի կառուցման օրինակագրման համար շրջանային կուտակումները» | | Կատարված է |





ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԿԱԴԱՍՏԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ-ՍԽԵՄԱՆԵՐ


Սյունիքի մարզ
Գորիս քաղաք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 09-003-0072-0003
Մասշտաբ 1: 500



սպասարկման գրասենյակ

Կ.Տ

Սյունիքի մարզ
Գորիս քաղաք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 09-003-0072-0003
Մասշտաբ 1: 2000



սպասարկման գրասենյակ

Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ



ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱՂՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

